



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1301



2010

2002

ԱՇԽԱՆ

ՏԵՐԵՒԹՅԵՐ

ԿՈՄ

ԳԱՂՏՆԻՔ

ԵՐԻՑԱՍՍՐԴԱՅ

ԵԼ

ՊԱՏԱՆԵԱՑ

Գ. ՊՈՎԱՆԱՄԱՐԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱԹԵԱՆ

— 1873 —

613.88

Դ-17

13.88

7-17

ԱՇԽԱՆ

ՏԵՐԵՒՆԵՐ

Կ. Ա. Մ.

ՀԵՏԵԽԱՆՔ


ԳԻՃՈՒԹԵԱՆ

ԵԿ

ԴԱՐՄԱՆՔ ՆՈՑԻՆ

Գ. ՊԱՎՏԱՍԱՐԵԱՆ

ԳՈՐԾ Ե.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱՆԻԿԱՅ ԴԱՎԱՅԵԱՆ

— 1873 —

ԺԱՄ Ը Գ Ա Ա Ծ Վ Բ

Տ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Վ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԱՅԻՆ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

38033-67

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Թէեւ կը հաւատամք որ Հայ երիտասարդութիւնը այս ծառայութեանս համար մեզի չնորհակալ պիտի ըլլայ, սակայն գուցէ այնակիսիք ալ գտնուէին որ դատապարտեն զմեզ՝ աշխատութեանս նիւթին վրայայս սկիսի պարզ և հասկնալի լեզու մը գործածելնուս համար: Ասի մեր փոյթը չէ: Մենք, տեսնելով որ մահուան հրեշտակը իր երկսայրի սուրբ մերկացնելով Հայ երիտասարդութեան գլխուն վրայ կը ըողշողացնէ զայն, նուիրական պարտաւորութիւն մը համարեցինք մեզ, վտանգի մէջ եղողներն զգուշացնել և նոյն թուրքն վիրաւորելոց սպեղանի մատակարարել: Մենք մեր այս աշխատութիւնը մեծաւ մասամբ վիրթէմ պէրկի արքունի մատուան Արքեպիսկոպոսին, (Փրէլաթ Տօքթօր Քարֆ է նորա անունը, զոր Գերմանից մէջ ալ ճանչնալու պատիւն ունեցած եմք) գրութենէն քաղած եմք: Յիշեալ Արքեպիսկոպոսը կըսէ թէ Արքազան մատենից մէջ ալ այնակիսի կէտեր կան յիշուած որ գուցէ ոմանց ամօթխածական զգացմունքը վիրաւորեն, այսու ամենայնիւ ոչ ոք կը տարակուսի որ նոքա, ալ, Արքազան զրոց այլ մասանցը նման, Անկեսլ մարդուն վիրականգնութեանը կը ծառայեն: Մաքուրին ամեն բան մաքուր է, իսկ անմաքուրին՝ մաքուրն անդամ պիղծ է: Մենք մեր Արքազան պարտաւորութիւնը կատարեցինք, հոգ չէ թէ աշխարհ

նորա վրայ ի՞նչ գաղաբար կը յայտնէ . բաւական է
որ այս աշխատութեամբս ԱՆԿԵՍԼ երիտասարդու-
թիւնը վերականգնի :

Այս է մեր սրտին բաղձանքը . այս է մեր աշխա-
տութեանց նպատակը , և այս պիտի ըլլայ միշտ , այ-
սինքն ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ԱՆԿԵՍԼ ԵՐԻՏԱԾՈՒԹՅՈՒ-
ԹԵԱՆ :

1 Փետրվար 1875

Քում-Քարոզ

Գ. ՊԱՂԱՍԱՐԵԱՆ

ԱՇԽԱՆ ՏԵՐԵՒԵԲ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեծ բերկութիւն կ'զգանք երբ գարնան
քաղցր եղանակը գալով ձմեռնային տիսուր և
անկենդան բնութեան նոր կեանք պարգեւէ , զա-
նի վերակենդանացնէ , և տերեւազարդ ծառերն
սպիտակ և վարդագոյն ծաղկներով պսակէ :

Ասկէց յանհունս գերազանց լինի մեր ուրա-
խութիւնը երբ ազնիւ ձիրքերով , տաղանդնե-
րով և կարողութիւններով զարդարեալ կայտառ
երիտասարդ մը կամ օրիորդ մը կը տեսնենք :
Ընդհակառակը աննկարագրելի է մեր ցաւը երբ
սոյն երիտասարդը կամ օրիորդը աշնան տժգոյն ,
թարշամեալ , թառամեալ և խորշակնահար տե-
րեւոց նման յերկիր տապալեալ գտնենք : Աւազ ,
խիստ բազմաթիւ են այն երիտասարդներն որ
չորցած և խորշակնահար եղած ծառի մը նման կը
Մին , որոնց կենաց ծուծը աւերիչ որդ մը ան-
գըթաբար կերած և սպառած է : Եւ որքան տը-
խուր գերեզմաններ կան իբր սարսափելի կոթող-
ներ և քստմնելի յիշատակարաններ սպառեալ
կենաց . կը սարսափինք հարցնել անոնց պատճա-
ռը , քանզի շատ հեղ պիտի իմանանք թէ հոն՝
հողին տակ անձնասպանի մը դիակը կը մնայ և ի

Հող կը դառնայ : Արտասուալից աչօք արդիւ երիտասարդութեան ահուելի վտանգը տեսնելով կաղդարարեմ ձեզ, ո աղնիւ երիտասարդք և օրիորդ, անձերնուդ վրայ կատարեալ արթնութեամբ հսկեցէք : Ահարկու թշնամի մը ձեր անդին կեանքը սպառելու հետամուտ է . մոնջող առիւծ մը , ամեհի վիշապ մը ձեր ետեւէն ինկած է . զգոյշ կացէք անոր որոդայթներէն որ չըլայ թէ իւր ճիրաններուն զոհ ըլլաք :

ԳԼՈՒԽ Բ .

ԵՐԻԾԱԾԱՐԴՈՒԹԵԱՆ ԹՇԱՄԹԻՆ

Երիտասարդութեան թշնամիներն բազմաթիւ են : Հպարտութիւն , ինքնահաւանութիւն , անհընազանդութիւն , սուտ աղատութիւն , ունայնափրութիւն , փառասիրութիւն , մարմնահաճութիւն , վատ ընկերակցութիւն , վնասակարգրեանք , իրօնական անհոգութիւն , անկրօնութիւն , անհաւատութիւն , մարդահաճութիւն , և սկզբնազրկութիւն - երիտասարդութեան կատաղի թշնամիներն են : Սակայն երիտասարդութեան ամենավայրի թշնամին գեռ չըլիշեցինք , վերոյիշեալներն ասոր գալանակիցներն են և իր զօրութիւնը կը բազմապատկեն . անոնք , այսինքն վերը յիշածնիս , եթէ սէկու մը վրայ յայտնի տեսնուին խոհեմ դաստիարակութեամբ կրնան ուղղուիլ և յաղթահարուիլ , մինչդեռ այն ամենաարտիւ թշնամին՝ զոր պիտի

յիշեմ , գաղտնի և ծածուկ կը ֆնասէ և իւր կործանութերն ու աւերմունքն երկար ատեն կը կատարէ առանց նշմարուելոյ և իմացուելոյ : Երիտասարդութեան այս գաղտնի թշնամին ԾԱՌՈՒԻԿ կամ ՀԱՄՐ մեղք կը կօչուի . և որովհետեւ մարդս անով իւր մարմինն և միտքը միանգամայն կարատաւորէ և կաղարտէ ԱՆՉՆԱՂԱԲՏ-ՏՈՒԹԻՒՆ (օնանե) և սովորաբար չէնունան կը կոչուի : Ասի ծննդական անդամներն հարկ լինելին աւելի և երկար ատեն շօշափելն կամ անոնց հետ խաղաղն է . նոյն միջոցին սովորաբար միտքը հեշտական խորհուրդներով և երեւակայութիւններով կը պարագի , և մարմնոյ այն անդամն , զոր ամօթխածական զգացումք մը շարժեալ այլ անգամներէն աւելի գաղտնի կը պահենք , վայրկենական և հեշտական հաճոյքներով գրգռելով սերմը կը հոսի , որոյ ներքին ամաշումմը և յանդիմանութիւն մը կը յաջորդէ : Յայնժամ ներքին ձայն մը անկեալ մարդուն կըսէ «Աստուծոյ դէմ մեղանչեցիր , ամօթխածութեան օրէնքն եղծեցիր , և մարմնոյ անդամոց մին մեղսալից , վասակար , վայրկենական , յիմար և թշուացնկութեան մի չարաչար դործիք ըրքիր » :

Հաղարաւորք այս մոլութեան գերի կըլլան առանց ինչ ընելին գիտնալոյ և երբեմն ալ ուրիշներէ գրգռուելով և առաջնորդուելով , և այսպէս կրեց չափազանց գրգռմանց , զղային թուլութեան և տկարութեան ողորմելի որսերն կը լինին :

Սակայն շատեր ալ գիտէն որ կը մեղանչեն , այլ չն ուղէր և չն կնոտր զայն թողուլ , - Զե՞ն կընո՞ւ - սարսափիելի է ասի ըսելն : Այսու ամենայնիւ այս

մեղքին անեծքը ճիշդ այս է որ նա մարդու հերեւի աստիճանի կը խօնարհեցնէ , գերի մը որ վերջապէս առանց կամքի իւր անդամներն վնասակար ցանկութեան մը և զազրալի ու պիղծ երեւակայութեան մը գործիք կը լի : Աւալ , թաքեալ նոյն մը կուրութեամբ զարնուած երիտասարդին երակացը մէջէն հոսելով նորա զօրութիւնն ու կեանքը կը մաշեցնէ և կսպառէ զայն : Տես այն պարտէզին ծառը , որուն տերեւներն քիչ ժամանակի մէջ գեղնելով դետինը թափեր են , մինչդեռ ամբողջ ծառը աւերեալ վիճակի են թարկեալ է , ֆնտուենք ասոր պատճառը . - ո՞հ այն որդն է պատճառը որ ծառին ծուծը ՚ի ներքուստ ծծելով հատյացեր ու մաշեցուցեր է զայն : Տես նաեւ պարտիզանը որ մեծ խնամով կաշխատի իր հիւանդ ծառը վերստին առջի վիճակին դարձնելու և վերջապէս կը յաջողի անհուն աշխատանքով աւերիւ որդն ջնջելով ծառն վերակենա դանացնել :

Տես այն տեղ ուրիշ ծառ մ'ալ , այն հաստաբուն և բաղմածիւղ ծառը . սակայն անտերեւ է նա , նորա մերկացեալ ճիւղերը դէպի վեր ուղղեալ գանգատ կը բառնան . յերկինս ամսունային այն քաղցը եղանակին մէջ առանց տերեւի և պտղոյ մնալնուն համար . այս ամեն շարեաց պատճառն այն խորշակն էր : Օր մը ծառերուն տակ պատած ատենս գեղեցիկ կարմիր խնձոր մը դտայ . ուրախանալով , միանդամայն զմայլելով վեր առի զայն . ամառուան տօթաքին օր մ'էր , կիզիչ արեւին ջերմութենէն ունեցած ծարաւս անցնելոյ համար ուտեւ ողեցի զայն , բայց խըն-

ձորն կտրած ատենս ի՞նչ տեսնեմ . բոլորովին փթտած էր այն , և սեւ փտութեան հօտն առնելով զզուանօք գարշեցայ անկից : Ասի այն որդն ըրած էր , որ խնձորը դեռ ծալիկ եղած ատենը մէջը մտնելով կերաւ . կերաւ և ՚ի սպառ մաշկցուց զայն : Սոյն խորշակը և որդը գիճութեան զզուելի պատկերը կը ներկայացնէ աշացս առջեւ , և այն տերեւազուրկ ծառերն աեսած ատենս որքան կը հառաչեմ երիտասարդաց վրայ որոնց շքեղութիւնը , զօրութիւնը , և վայելութիւնը այս գաղտնի որդը աւերած է , և որոնց ներսը այն փտած խնձորին նման ապականութեամբ լցուած է :

Աստուած իմ , գթա այս խեղճ ողորմելիներուն :

~~~

### ԳԼՈՒԽ . Գ .

ԳԻՃՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ ԵՒ ԱՊԱՑՈՅՔ  
ՆՈՐՄ . ՈՉԻՆՉ , ՄԵՂԱՍԼԻՑ , ԵՒ ԿՈՐԾԱՆԻՉ  
ԼԻՆԵԼՈՒՆ

Ծննդական գործարաններն շոշափուելով վայրկենական գրգիռ մը և հաճոյք մը յառաջ կըդայ , որոյ հետեւանքն լինի արանդամէն ուրիշ կոչեալ հիւթին դուրս հոսելու : Սերման ինչ լինելը բուսոց վրայ լաւ կը տեսնուի . խնձորին կուտը նոր խնձորենի մը սերմն է . արեւածաղկին սեւ հատերն ուրիշ այն տեսակ բոյս մը յառաջ բերելու սերմն իրենց մէջն կը կրեն : Ցուրենի հատերն նոր հնձոց սերմունքն են . այս-

պէս ամեն տունկ և բոյս իրեն համար սերմունի , ամեն մէկն իր տեսակին պէս :

Ամենայն ծաղիկք սերմ յառաջ բերելու համար են , որով բոյսերն կածին և կը բազմանան : Ծաղկանց մէջ արական և իդական ծաղիկներ կան : Տես այն կակաչը , որուն բաժակին մէջ կան : Տես այն կակաչը , որուն բաժակին մէջ կան : Վեց փոքր ծիլեր կան , ասոնց ամեն մեկուն վրայ պարկեր կան մէջտեղը կլոր բածուացքով մը . ծիլերը սոյն ծաղիկն արական մասն կը կազմեն և արական արտադրիչ փոշին կամ սերմը կը պատրաստեն , իսկ այն պարկերը բոյսին իդական մասունքն են որ օդին շարժմամբը արական փոշին կը նդունին և սերմն իրենց մէջը կը հասցնեն : Հոս արական և իդական մասունքն այս բոյսին վրայ գոյած են , սակայն ծառոց մէջ շատեր ալ կան որ Գոյն արական իսկ այլք Գոյն իդական ծաղիկներ ունին , և արտադրիչ սերմն հովին միջոցաւ արական ծաղկէն իդականին կը տարուի : Ճիշդասոր պէս ալ մարդկային աղդին մէջ սեռերն բաժանեալ են . արական սեռը սերմը կը կրէ . սերմը առանեւ լցուրուր տարուին մէջ հասուննալ կսկսի , սակայն առանեւ կանչերուր տարուին մէջ կատարելութեան կը հասնի : Սոյն կատարելադործեալ սերմէն արուն , ամուսնական իմաստուն կարգադրութեամբ , փոքր ինչ իդական սեռին կը հաղորդէ , ճիշդինչպէս որ արական ծառին ծաղկին փոշին իդականին պարկին կը հաղորդուի , որով պատղարեր կը լինի նա : Այս երկուքն ալ մէկ պատղարեր կը լինի նա : Այս երկուքն ալ մէկ վայրկեանի գործ են , և ասիկոյ անճառելի երջանկութեանց աղբիւրն երեւակայելն մեծ յիմա-

բութիւն մ'է : Սատանային հնարքներուն մին է այս , որ երկու տարբեր սեռերու միացումը թեթեւամիտ մարդկանց երեւակայութեանը մէջ ամեն երջանկութեանց վեհագոյնը նկատել կրտայ . հաղարաւորք և բիւրաւորք սոյն երեւակայութեամբ ճամբայ ենելով իրենց խափուած լինելուն վրայ խիստ ապշեցան . զարմացան որ ակնթարթի մը մէջ աներեւոյթ եղան հեշտական զգացմանք , և իրենց յուսացած , երեւակայած ու երազածը չդուան կազդուրիչ լուացմունք մը , հաճոյական խնճոյք մը , ծաղկեալ գեղեցիկ դաշտերուն մէջ պտոյս մը , ազնիւ մարդոց հետ տեսակցութիւնն մը , օգտակար գըքի մը ընթերցումը - ասոնք աւելի հաճոյական առարկաներ են քան թէ ապականեալ երեւակայութիւնը գիւճութեամբ և շնութեամբ յագեցնել : Թոյնի բաժակներ են այս երկուքը , որ թէեւ վայրկեան մը հաճոյք պատճառեն այլ օրեր և տարիներ ցաւ . խզճի խայթ և թշուառութիւն յառաջ կը բերեն :

Ադամու եւա արգիլեալ պտուղն ուտելին մեծ բաներ կը յուսային , սակայն որքան որ սիրուն և հաճոյ թուեցաւ իրենց անկէ ճաշակելունին , բիւրապատիկ աւելի եղաւ քիչ մը յետոյ իրենց երկիւղն ու ցաւը , որ Աստուծոյ երեսէն վախչելով ծառոց մէջ ինքինքնին ծածկեցին . և երբ իրենց մեղաց պատիմն ու անեծքը Աստուածային բերանն վճռեց , և բոցեղէն Քերովիը զանոնք գրախտէն դուրս , անապատը աքսորեց , որքան դառն արտասուօք զղջացին անսնք վայր-

կենական հաճոյքը յագեցնելուն վրայ : Մարդկութեան նախածնողաց համար արդիլեալ ծառը մեզի համար ալ մարմնոյ այն անդամն է որ Աստուծոյ ուղած ատենէն, ալինքն ամուսնութենէ յառաջ իրաւունք չունինք գործածելու :

Պիղծ և ապականեալ երեւակայութեան տէր անձինք զիրենք արդարացնելոյ համար կըսեն թէ ծննդական գործարանաց զարգացումը զանոնք յաճախ շօշափելոյ կարօտ կընէ . ասի յուսի յիմարութիւն մ'է , և այնքան վատ ինչպէս եթէ գինեմոն ըսէր թէ արբեցութիւնը իրեն օդակար է : Անշուշտ որեւէ վատութեան գերի եղող մը ինքինքը արդարացնել կը ջանայ , անիրաւ փաստաբանի մը նման , որ անիրաւութիւնը իր իրաւունք կուղէ հաւատացնել :

Ուրիշներ ալ կըսեն թէ սերմը պարպելոյ գրդիռն բնութենէ է ոււստի պէտք է յագեցընել զայն : Առ քեզի սուտ մ'ալ , իրը թէ խարերան խարելէ զատ ուրիշ բան չեմ կրնար ընել ըսէ , և գողն առարկէ թէ գողութենէ զատ ալ բան մը չիրնար ընել : Միայն կենդանեաց մէջ , ան ալ երբ կատարեալ հասակի ժամանած են անոնք ծննդական անդամոց գրդիռն յագեցնելոյ մղում մը կայ : Մարդուս մէջ այսպիսի մղում մը չկայ , նախախնամութիւնը այս մասին ալ կարդադրութիւն մ'է ըրած մարդուն համար ուսկից կենդանիք դուրի են :

Երբ արուն աւելորդ սերմն ունի գիշերը քընոյ մէջ նա ինքին կը համի . ասի ըստ կանոնի , ամեն երեք շաբաթն անդամ մը կը պատահի ,

միայն թէ այն մարդիկը որ գիճութեամբ կործանեալ , խանդարեալ , տկարացած և չափազանց գիւրագրդիռ եղած են մէկ շաբաթուան մէջ մի քանի անդամներ , մինչեւ իսկ ամեն գիշեր , սերմնահոսութիւն կունենան . ասի նոյն ատեն ստուգիւ հիւանդութիւն մ'է որ մարմնոյ և մտաց համար ծանր հետեւանքներ կրնայ ունենալ , սակայն երբ երկու կամ երեք շաբաթն հեղ մը , մի անդամ , սերմնահոսումպատահի քնոյ մէջ յայնժամբնութիւնն է այն որ աւելորդը կարտաքսէ և ասի վասարկար չըլլալէն զատ յաւէտ օդտակար կըլլայ . ասկից զատ ուրիշ որեւէ կերպով սերմնահոսութիւն , բացի ամուսնութենէ , անէտ և նաւահոր է և թէ բնութիւնն և թէ կրօնքը միանդամայն հոբէլն : Մովսիսական գրութեան մէջ յաճախ սերմնահոսում ունեցող մարդմը Տաճարէն և ընկերական կեանքէ արտաքսեալ էր , (Գիրք Ղեւտացւոց Գլ. ԺԵ.) , որոյ գպչողն անմաքուր կը համարուէր , և երբ սերմնահոսումը բուժուելով վերջանար տակաւին եօթն օր անմաքուր սեպուելով , միայն լուացուելէ և հանդերձներն մաքրելէ ետեւ կրնար դարձեալ այլոց հետ յարաբերութիւն ընել : Այն , մինչեւ իսկ , ըստ կանոնի բնութեան , քնոյ մէջ եղած սերմնահոսումը պիղզ կը սեպուէր (տես նոյն գրքին նոյն գլուուն 16 համարը) , նաեւ կանանց պարբերական հոսումը (նոյն տեղ համար 19) անմաքուր կը համարուէր :

Այս պարբերական հոսումը Ամենիմաստ Արարիչը կարգադրած է որ հիւանդութիւն մը չէ

այլ առողջութեան պատճառ և նշան . ասով յը-  
զութեան ատեն , երբ պարբերական արեան հո-  
սումը դադրի , արդանդին մէջ սերունդ առնող  
մանուկը սնունդ կատանայ :

Թողլով որ մեր սրբազն կրօնքը և սուրբ  
Աւետարանն և բարոյականութիւնը անժխտելի  
կերպով մարմնոյ վրայ գործեալ այս պղծութիւնը ,  
գիճութիւնը , խստիւ կարգիլէ և ամենասարսա-  
փելի պատիմներ ու անեծքներ կը տնօրինէ (\*) ,  
անցնինք գիճութեան հետեւանացը . նորա բժոյիլ  
աս աշխարհիս վրայ կակօի , դի նա բոլոր մարմինը  
և միտքը կը կործանէ , կը խանգարէ և կապա-  
կանէ :

## ԳԼՈՒԽ Դ.

ԳԻՃՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՄՆՈՅ ԱՄԵՆՍԶՆԻԻ  
ՀԻՒԹԵՐՆ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ  
ԿՍՊԱՌԷ ԵՒ ԿԱՊԱԿԱՆՆԵ

Արական ծննդական գործարաններէն գըր-  
դըրմամբ հոսած սերմն մարմնոյ ամենազօրաւոր  
և ամենակենսական հիւթն է , որոյ պաշտօնն  
է մարդկային կենաց ծիլ լինել , ուստի նորա

(\*) Տե՛ս , սուրբ Աւետարանին հետեւեալ համար-  
ները . Կողոսացոց Գլ Գ. հմր. 6 : Եփեսաց . Գլ Ե.  
հմր. 5 : Հոռվայեց . Գլ . Ա. հմր. 24 և 32 : Ա. կո-  
րընթաց . Գլ Գ. հմր. 18-20 . և դարձեալ նոյն գրքին  
Գլ Գ. հմր. 17 եայլ :

մէջ մարդկային բնութեան վերաբերեալ ամե-  
նայն ինչ բողբջանման պարունակեալ է բուսոց  
վրայ տեսնուածին պէս : Ոերմը՝ նոր բոյսն ըստ  
էպութեան և կենաց իր մէջ կը կրէ և յետոյ  
կարտադրէ , հետեւաբար բուսոց մէջ ալ սերմը  
բոլոր բոյսին ամենազնիւ . և ամենակատարեալ  
մամն է : ի՞նչ են ճիւղերն ու տերեւներն . ի՞նչ  
են ամենագեղցիկ ծաղիկներն ծառին պտղոյն  
հետ բաղդատմամբ . պտուղը սերմն իւր մէջ կը  
բովանդակէ , և բոյսին բուն զօրութիւնը հոն է  
կեդրոնացած , և նորա աճումն ու զարդացումը  
միայն անոր համար է : Ճիշտ այսպէս նաեւ  
մարդկային սերմն կենաց զարդացման և աճման  
կեդրոնն է : Հոն կեդրոնացեալեն մարդկային կե-  
նաց բոլոր զօրութիւններն :

Մարմնոյ այն անօթներն , յորում սերմն կը  
պատրաստուի , բոլոր կենաց ամենազնիւ և կեն-  
սապահ գործարանաց հետ սերտ կապակցու-  
թեան մէջ են . ասոնք են արեան երակներն ,  
յիղերը և մանաւանդ ողեղը որ բոլոր ջլաց կեդ-  
րոնատեղին լինելով կենաց ամեն գործողութեանց  
աղբիւրն է : Որովայնի գլխաւոր երակէն երկու  
երակներու (սագի փետրոյ հաստատութեամբ )  
ճիւղեր արիւնը ծննդական գործարանաց կը հա-  
ղորդեն . անհամար մազի պէս երակներ արիւնը  
զարով անոր ամենազուտ , ամենասննդարար և  
ամենազօր մասը կը զատեն և սերմը կը պատրաս-  
տեն : Արիւնը բոլոր մարմինն սնուցանող նիւթն  
է . մեր կերած ու խմած բաներուն ամենալաւ  
մասունքը արիւնը իր մէջ կը ժողովէ : Ստամոքսին

և աղիքներուն մէջ մարսուած սհունդը (Chymus) անթիւ ծծէ երակներէ հաւաքուելով սպիտակ սնուցիչ նիւթի մը կը փոխուի (Chylus) և դրւ խաւոր երակէն (ductus thoracicus) անցնելով դէպի ձախ թեւին տակէն վեր կելէ և արեան անօթին (vena subclavia) մէջ կը թափի , ասկից ալ դէպի սիրուր կը հոսէ : Այսպէս արիւնը շարունակ մեր կերած սնունդներուն նիւթէն է , թոքերուն մէջ ալ , մեր չնշած օդէն կը մանանի : Արիւնը սրտէն մարմնոյ ամեն կողմն կը հոսէ , և ոսկորներուն , ծուծին , միսին , մորթին , և մարմնոյ ամեն կողմերուն պէտք եղած սնունդը կը մատակարարէ :

«Մարմնոյ կեանքն արիւնն է» : Այս կենսական նիւթէն սերմն կը գոյանայ որուն մէջ արեան կենսական մասունքը և զօրութիւնները կատարելապէս կը բովանդակին : Սերմն կենսական հիւթ մ'է , կենսատու , սննդարար և զօրեղ հեղուկ մը որոյ մի քանի կաթին ամբողջ մարդու մը կենացն տիպը կը բովանդակէ իւր մէջ : Այս է ահա դիճութեամբ վատնեալ և սպառեալ կենսական հիւթը :

Բժիշկներն կը հաստատեն որ ունի մը (8 տրամ) սերման կորուստը մարմինը առաւել կը տկարացնէ քան թէ 40 ունկի (320 տրամ) արեան կորուստը : Արդ , խորհէ , երիտասարդ , որ մարդու մը երակէն հազիւ 10 ունկի (80 տրամ) արիւն կառնուի , և այն ալ երբ հաստատուի թէ մարդն առանց անոր վտանդի մէջ է . խորհէ , թէ այս կորուսեալ արիւնը որքան կը տկարացնէ

մարդը . երեւակայէ անդամ մը ջերմերով տանջուողներուն վիճակը , երբ կառողջանան որքան թոյլ , անզօր և տկար կը լլան , որոյ պատճառն , բացի ուրիշներէ , արեան կորուստն է . և տակաւին անոնք գուցէ 40 ունկի արիւն կորուցուցած չեն . չես սարսափիր , խեղճ պատանի , երբցաց աստիճանի որ քեղնաման հաղարաւորք իրենց կամոքք քիչ ատենի մէջ առաւել քան 40 ունկի սերմ կը կորուցնեն , և արդեօք զարմանալի է որ այն կենսապահ և զօրեղ հիւթին կորուստը այնպիսի տիպուր հետեւանքներ կունենայ : Սակայն սարսափելով պէտք է ապշինք երբ խորհինք որ դիճութիւն ընօղներուն մեծագոյն մասը սերման ըստ բնութեան օրինաց համարույ ժամանակէն , այն է տասնեւլեցերորդ տարիէն , առաջ կոկըսին , և բնութեան վրայ կը բռնանան : Այն դըրդիւն որ դեռ քնացած լինելու էր , պատանեցութեան մէջ բռնի կարթնցնեն և ծննդական գործարաններն բնութեան հակառակ գործողութեանց կը մղուին , որով ջային ամբողջ դըրութիւնը սարսափելի կերպով կաւերի ու կը խանդագարուի , և մարմնոյ ու մտաց աճումը , զարդացումը և առողջութիւնը կարգիրուի և կործանաման կը մատնուի : Ոմանք կը խորհին թէ երբ անդամ մը սերմն արիւնէն զատուած է , հոսել տան վնաս չունի , ըստ որում արիւնը շարունակ նոր սերմ կարտադրէ : Սարսափելի սխալ մը , մեծ մոլորութիւն մ'է ասի : Մեր կաղմութիւնը քննելով կը տեսնենք որ քնոյ մէջ չը հոսող սերմն աղջանին հետ կիսառնուի և արշարունակ արեան շրջանին հետ կիսառնուի և ար-

եան նոր անունով և բոլը մարմնոյ զօրութեան կը դայ : Ամբողջ մարմնոյ մէջ լոկ շնչերակներ (arterie) չկան որ արիւնն սրտէն մարմնոյ բոլոր անդամոցը և մասանցը կը հաղորդեն, այլ նաեւ ծծիչ երակներ (vena) որ մարմնոյ բոլոր մասունքներէն արիւնն ծծելով սրտին կը վերադարձնեն . նոյնպէս ալ սերման անօթներուն մէջ այսպիսի ծծիչ երակներ կան որ շնչերակաց արտադրած սերմն ծծելով կը հաւաքեն և արեան վերաստին անդարարու զօրացոցիչ նիւթ կը հաղորդեն . ասի արական զօրութեանց բուն աղբիւրն ու հանքն է . ասով արուն էգէն իր ուժովը կը տարբերի, ասի նոյն իսկ արական կենաց բոցն վառ պահող իւղն է : Գիճութեամբ արիւնը այս կենսական հիւթէն կը զբկուի, և ուստի բոլոր մարմինը զօրացնելու անկարող կըլլայ : Աերմը կորսնցնելը շարունակելով արեան կենսապահ զօրութիւնը և անդարար հիւթը կը պակսի, արեան որպիսութիւնը և բնութիւնը կը փոխուի, և իր ազնիւ մասերն կը պակսին, ֆսասակար մասունքն կաճին ու կը բազմանան, լաւ արիւնը գէշ արեան կը դառնայ, և այսպէս բոլոր մարմնոյ գործարանաց, անօթաց երակաց ու հիւթոց մէջ կործանում, աւերում թոյն, տկարութիւն, և ընդհանուր խանդարում լինի, և այն մարդն կոկուի հետզհետէ բառահել, բառահել, Հարիարանալ, աղիանէլ և վերջապէս կը դառնի :

## ԳԼՈՒԽ Ե.

ԳԻՃՈՒԹԻՒՆԸ ԶԻԴԵՐՆ ԲՆՈՒԹԵԱՆ  
ՀԱԿՍՈՒԱԿ ԿԸ ԼԱՐԷ ԱՏԵՆ ՄԸ ԵՒ ՅԵՏՈՅ  
ԿԸ ԹՈՒԼՑՆԷ ԶԱՆՈՆՔ

Այս գլուխը մասնաւորապէս իգական սեպին ուշադրութեանը կը յանձնենք, ինչու որ յաւետ աննաց կը վերաբերի : Ծննդական գործարանք մարմնոյ միւս անդամներէն առաւել ճոխեն ջիղերով . այս բաղմաթիւ ջիղերուն միջոցաւ նոքա մարմնոյ աղնուագոյն մասանցը հետ սերտ յարաբերութեան մէջ են, (ողնայարին ծուծին և անոր ջիղերուն հետ ուղեցին և անոր ջիղերուն հետ) . և որովհետեւ ջիղերն ամեն շարժմանց և զգացմանց պատճառն ու առաջնորդն են, ուստի ծննդական անդամոց վնասող ամենայն ինչ ջիղերուն և մանաւանդ ներքին գործարանաց, ինչպէս ստամոքսին, մարսողութեան գործարանաց և կուրծքին մէջ թագեալ ազնիւ անօթներուն, կաղդէ : Մարմնային կենաց վրայ ջիղերուն ունեցած այս աղդեցութիւնէն դատ մտային կենաց ալ կաղդեն աննաք . նոքա մտային կենաց բուն զգացողութեան և շարժման միջոցներն են, և առանց ջղային առողջ կենաց մտային վիճակն անկարելի է որ առաղջ լինի :

Արդ ծննդական գործարաններն գրգռելով՝ աննաց ջիղերն ալ, և իրենց հետ մարմնոյ միւս ջիղերն ալ բնութեան հակառակ կը գրգռուին,

կը ձգտին, կամ կը լարուին. ասի դիճութեան  
մէջ անհունս բռնի է, քան բնութեան համա-  
ձայն Աերձաւորութեան մէջ. ուստի, ընդհա-  
նուր առմամբ, նա առաւել եւս վնասակար է  
քան զայս: Ամեն ձգտման և լարման քակումմը,  
թուլութիւն մը, կը յաջորդէ. թեւդ եթէ խստիւ  
շարժես, հուսկ յետոյ նա թուլցած վար կիյնայ:  
Երբ ստամքսդ չափազանց և զօրաւոր կերա-  
կուրներովլ լեցնեսնա կը թուլնայ և կը տկարանայ:  
Եթէ աչքդ չափէն աւելի նեղես նա կը տկարա-  
նայ, կը յոգնի և կը վնասուի. դինեմոյլը եթէ  
արբեցուցիչ ըմպելիքներվ ջիղերն դրդուել շա-  
րունակէ, ձեռքերն և ծունկերն կը դողդղան.  
և եթէ երախայ մը իր փոքր մատն շարունակ  
բերանը դնէ, այն մատն միւսներէն փոքր ու  
տկար կը լինի: Այլ սակայն ասոնցմէ հազարա-  
ւոր անդամ առաւել է երբ դիճութիւն ընողը  
բնութեան հակառակիր ամենանուրը ջիղերը ձըգ-  
տեցներովլ և դրդուելովլ իրեն կործանում և մահ  
պատրաստէ: Զարաչար դործածեալ ջիղերն ի-  
րենց իսկութիւնը կայլայլեն, զօրութիւննին կը  
կորսնցնեն, անոնց բուն ձգտումը և կեանքը կը  
վնասուի, անոնք դողդղալ կակսին, զի մարմինէն  
այն հիւթերն կարտաքսուին որոնտ հայր մարմնոյ  
կենդանութիւն և մտաց առողջ կեանքը կուտան:  
Ուստի ՓԻՔՈՒՆԻ, որ սովորաբար ցանկութեան քա-  
րողիչ կը կոչուի, կըսէ, « Սերման կորուսու հարհուց և  
հորոց մէկ հասն կորուսուն է » և կը խրատէ սոյն հիւթը  
զգուշութեամբ պահել և պահպանել:

« 21 »  
դիմի վնասներն ու վտանգները թէ իդական և  
թէ արական սեռին համար նոյն են.

## ԳԼՈՒԽ Զ.

ԳԻՃՈՒԹԵՆԷ ՅԱՌԱՋ ԵԿՈՂ ԲԱԶՈՒՄ  
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵԽ ՄԱՐՄՈՅՑ  
Ա.ԻԵՐՄՈՒԽՆՔ

Այս նիւթիս վրայ ես բժիշկներուն խօսիլ  
սիտի տամ, թող անոնք իրենց բազմամեայ  
վործառութեամբը դիճութեան վնասուցը ապա-  
ցոյցներն անվործ պատանեաց յայտնեն: Սակայն  
եթէ այս տկարութեանց մին մէկու մը վրայ տես-  
նելու լինիք, չըլլայ որ անմիջապէս զանի իրը  
դիճութեան որս մը դատապարտէք, քանզի նոյն  
տեսակ հիւանդութիւնք երբեմն և շատ անդամ  
բողորմին այլ պատճառներէ ալ յառաջ կը դան,  
ինչպէս չափազանց ուսանենէ. ասի ալ դիճու-  
թեան նման ջիղերն կրնայ տկարացնել առանց  
տկարին կողմանէ պատճառ տրուելոյ. նաեւ կըր-  
նայ պատահիլ որ երբեմն դիճութիւն ընողի մը  
վրայ երկար ատեն նոյն արդիւնքները չը տեսնը-  
վին և նա ալ խորհի թէ դիճութիւնը նկարագ-  
ածիս պէս գէշ հետեւանք չունի, սակայն, ան-  
ըսածիս գէշ հետեւանք չունի, սակայն, ան-  
ըսածիս գէշ հետեւանք չունի, սակայն, ան-  
ըսածիս գէշ հետեւանք չունի, սակայն, ան-

Այսքան մենք խօսեցանք, սոյն նիւթին վրայ  
քիչ մ'ալ բժշկաց ձայնը լսենք: « Գիճութեան

Հետեւանքներն , կըսէ թեսօ , զանազան են ըստ տարրերութեան մարմնոյ կազմութեան և կենցաղավարութեան , ուսկայն ոչ ոք այս կամ այն կերպալ անոր հետեւանքներէն կրնայ պրծիլ : Իմ փորձառական շրջանիո մէջ պատահած ամենավատ դէպքերն հետեւ եալներն են որոնք խիստ յաճախ կը պատահին : Արածուսէ կարութեալ խանչարում . գիճութեան գերիներէն ոմանք կամ ախորժակին կը կորսնցնեն , կամ անսովոր բաղձանք մը կունենան ուտելոյ որ երբեմն անասնական անյագութեան աստիճանի կը մօտենայ : Այլք սաստիլ յաւեր կզտան , մանաւանդ մարսողութնան ատեն , կամ այնպիսի անսովոր կերպով կը փոխեն որ բուժեն անկարելի է մինչեւ որ այս զաղրալի սովորութիւնը չը թողուի :

Ենաւունեան դրբարտուն + կը ոկտրանան . ասկից շատ հեղ չոր հաղ մը կը գոյանայ , և ձայնը գրեթէ միշտ տկար և մեղմ կըլլայ , և քիչ մը խիստ շարժում եղած ատեն մարդք հեւալ կըսկիսի :

Ջւանն դրսնեւը բարեպին կը նունայ . այն որ մարդկային մարմնոյ կազմութեանը վրայ փոքր ինչ գաղարար ունի , գիւրաւ կը հասկնայ որ այս երեք պատճառներէն ամեն տեսակ գաղտնի հիւանդութիւնք կը յղանան և առօրեայ փորձառութիւնն կապացուցանէ որ ասի յիրաւի կը պատահի : Որպա առաջի գառն պտուղներն են նորունց զրունեւուն դժուկն նուռալուն , այդեւուն դաստարունեւուն , շրմանց աժքանաւունեւուն , երևէ դաստարունեւուն , իսպագագոյն օշիներ աշբան շարջը , անորոշ և երկչու հայեցուածք , ապակի նման աչքեր , դէմքին վրայ

փոքր կանչէ որոնք մերթ ընդ մերթ կը պայթին այլոց տեղ բանալոյ համար և սովորաբար ճակատին վրայ , երկու ականջներուն վերի կողմը , քիթին և շրմանց բոլորտիքը նոր ի նորոյ իրալու կը յաջորդեն , որոնք շատ կամ քիչ շարաւ կը պարունակեն , բացի սոցանէ զգալի նիհարութիւն , զարմանալի դիւրդդայնութիւն , մանաւանդ երբ օդն կը փոխուի , աչաց յոդնութիւն և տկար տեսութիւն , մտային բոլոր կարողութեանց իրական նուազում , (մանաւանդ յիշողութեան ) : Մինչեւ հոս Տօքթօր թեսօի վկայութիւնները մէջ բերինք , որոյ Տօքթօր Հուֆէլանտ գրեթէ կէտ առ կէտ կը համաձայնի : Անդ զիացի բժիշկ մալ հետեւեալ կերպով կը խօսի :

« Գիճութեան ունակութիւն ունեցող անձանց մարմնը երբէք կատարեալ անում և զարդացում չստանար , այսու ամենայնիւ կրնայ ըլլալ որ բարձրահասակք գիճութեան գերի եղած անձինք լինին և շատ կարճահասակներ անկից բոլորովին զերծ : Այս ախտին որս ըլլալներէն ոմանք բնաւ չեն կրնար քնանալ . ոմանք ալ գրեթէ միշտ ծննդական անդամոց կիզում ունին , որոյ հետեւանքն է սրտի բաղխում , նուազում , տիրութիւն , հառաջանք և լալ : Ուրիշներն ալ խիստ գէշ կը հաղան , գաղտնի ներմ և խիստ գառն ցաւերով թոքախտ կունենան : Մին գլխուն վրայ կը գանդատի , միւսն կուրծքին վրայ . մին ըստամոքսին վրայ , ուրիշն աղիքներու վրայ . ոմանց մարմնոց բոլոր անդամներն կը գողան , ինչպէս

ձեռքերն , ոտքերն եւն . և ծունկերնին անհաստատ և անդօր կըլլան , այլոց ալ աղիքներուն գործողութիւնը անկանոն լինի . ոմանք շարունակ որովայնի պնդութիւն կունենան , այլք արեան հոսում . այս աղետից կընկերանան ծննդական անդամոց մէջ ցաւ և գրգռում և շարունակ սերմահոսութիւն , որով մարմնոյ բոլոր զօրութիւնը կապառի . ոմանք միզելու մեծ գժուարութիւն կը կըեն , այլք չեն կրնար մեզն պահել չափահաս անձանց յաճախ յակամայս միզելուն պատճառն այս է :

Պէօրհափէ հոչակաւոր բժիշկն ալ գիճութեան հետեանքները այսպէս կը թուէ . մարմնոյ անդամոց յոգնութիւն , անհոդութիւն , ծուլութիւն , գողալ , նիհարութիւն , հիւթոց սպառում ; ուղեղի ցաւ , զգայարանաց մանաւանդ աչայ , փթութիւն , ողնայարին ծուծին սպառում . անզգայութիւն և այլ բազմաթիւ հիւանդութիւնք :

## ԳԼՈՒԽ . Ե .

ԳԻՃՈՒԹԵԱՆ ԾԱՆՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ  
ՄՏԱՅԻՆ ԿԵՆԱՅ ՎՐԱՅ

Գիճութեան մարմնոյ վրայ ունեցած սարսափելի աղեցութիւնը և յառաջ բերած ծանր հետեւանքները քննեցինք , այժմ հայէն կնառած կըրած խանդարմանցը վրայ խօսելոյ կուգանք . ասի ստուգիւ մարմնոյ կրածէն աւելի ծանր և ցա-

ւալի է : Գիճութեան գերի եղող մը ըստ արտաքին երեւոյթի մարմնոյ կատարեալ առողջ կրնայ երեւնալ . այտերն լեցուն կրնան լինիլ , սակայն իներքուստ սորա գլխովին հակառակն է . նորա մտային կարողութիւններն իսպառ խանդարեալ են և աւերեալ , հոգին մահուան մօտ հիւանդ է :

Գիճութենէ ճնշուող և մխասուող մարմնոյ մասունքներէն ամենէն առաւել խանդարւողներն ջէւէն են , որոնք մարմնոյ ամենանուրբ և ամենագաղտնի մասունքն լինելով իրենց խանդարումն ալ անմիջապէս յայտնի չը լինիր : Ասի ճիշդ այն տանը կը նմանի որ երկար ատեն հաստատ ու լաւ կեցած է , մինչդեռ նորա հիմ եղող գերաններն շատ ատենէ ի վեր որդերէն կերեալ ու մաշուած են , և երբ այս սպառումը որոշեալ կէտի մը հասնի , յայնժամ կը փլչի նա . և ով չգիտեր որ խիստ մեծ լինի նորա կործանումը , Դարձեալ սորա նման , խնձոր մը կընայ երկար ատեն իր լուսաճաճանչ կարմրութեամբն ոյլոց աչքը շացնել , մինչդեռ ի ներքուստ աւերիչ որդի մը կերակուր է եղած նաև երբ փտութիւնն անդամ մ'սկսէ յայնժամ ամբողջ խնձորն իսպառ կը փտտի :

Այսպէս կան գիճութեան որս լինող գեղեցկատեսիլ երիտասարդներ որոնց վրայ տկարութեան նշոյն անդամ չերեւիր , սակայն նոցածուծը բոլորին մաշած ու սպառած է . մարմնոյ մէջէն կենսապահ հիւթերն ու մասունքներն սպառած են և մանաւանդ միտքը տկարացած է : Զիղերն մտային կենաց գործիներն ու միջոց-

ներն են, ինչ բան որ միզերուն կը մսասէ մտքին եւս կը մսասէ, ասոր համար գիճութեան աղդեցութիւնը հոգինը հոգինը պատել և վրասը է + ան հոգինը կը, և երբ գիճութեան գերի լինող երիտասարդի մը վրայ արտաքին այն վատ հնտեւանքներն տեսնուին, իներքուստ եղած կործանումն ու խանդարումը առկից խիստ շատ յառաջացած է և մոտաց մէջ մեծ աւելութեր տեղի ունեցած են :

Ընդհանուր առմամբ կրնանք ըսել որ գիճութիւնը մտային կարողութեանց անկամոնութեամնն ու խանդարմանը, գրդաման, մելամաղձութեան, յիմարութեան, խելագարութեան և անձնասպանութեան պատճառ կըլլայ: Շատ հեղ այս հետեւանքներն արտաքուստ չեն երեւիր, գիճութեան գերին այլոց նման կը շարժի, կը դորձէ, ուրախ և զուարթ կը ինի, քաջառողջ և երջանիկ կը թուի, սակայն իներքուստ նորա մոտային կեանքը թառամելոյ վրայ է ստուգիւ անտանելի է աշխարհիս մէջ այս տեսակ կեանք մանցնելը, առանց մխիթարութեան խաղաղութեան և առանց յուսոյ :

Վերոյիշեալ ընդհանուր ստորագրութեանց վրայ մասնաւոր տեղեկութիւններ տանք: Այս թունաւորի մոլութեան երիտասարդաց վրայ բերած հետեւանքներուն մին այն է որ անոնց խորհուրդներն արուել լինին, ուսանողներն գասիր ատեն բնաւ ուշադրութիւն չեն կրնար ընել, ուսմունքը կատեն և աշխատութենէ կը գարշին, ուրով գիտութեան, ջանքի և բարոյական վարուց

մէջ ետ ետ կերթան, գիճութեան գերին եւս առաւել կրօնքը կատէ, ինչպէս նաեւ ամեն բարձր և ազնիւ բաները, այնպիսիք իրենց անձին շրջանէն անդին չեն կընար անցնիլ, սակայն ինքինքնին ալ չեն կընար սիրել. հետեւարար անձերնէն զզուանոք կը գարշին, և այլոց առջեւ խոնարհիլ չկամելով բոլոր աշխարհս կատեն, այսպէս ամեն բանէ զզուելով, Աստուծոյ, մարդկանց և իրենց գէմբարկութիւն և զայրոյթ ու ձանձրութիւն կզգան, և ինքինքնին բարուներուն նման մարդկային ընկերութենէն կարտաքրուն. սէրը և բարեկամութիւնը, անմեղ զուարճութիւն և ուրախութիւն անոնց համար չէ. մէկ խօսքով երջանկութիւն չկայ այնպիսեայ համար, այլ միայն անբարյոյական և պիզծ խօսակցութիւնք, զազիր պատմութիւնք, և այլանդակ նըկարներ անոնց ուշադրութիւնը գրաւած է, ասոնք են միայն անոնց ուրախութիւն պատճառող առարկաներն, գիշեր ցերեկ իրենց պիզծ փափաքներն կերպեն անոնք և երեւակայութիւննին անոնցմավ զրազած է: Ասի հորդն չէ հունական կը կոչուի որ ոմանք առանց մարմնականին կը կատարեն, այլ սակայն նորա հետեւանքը միշտ այս է որ մարդուս ներսը անբերի անապատ կը գառնայ, ուր բոյս չկընար աճիլ, և ուր ջուր չընոսիր, այլ լոկ չոր աւազը փոթորկալից հովերէն աստ և անդ կը տարութերի ամեն մէկ կանանչագեղ բոյսն արմատէն խլելով: Այլ եւս զազրակի երեւակայութիւններ մտաց վրայ յարձակելով խորհրդածութեան, վճռոյ,

գատողութեան , զգացման , կամաց , և յիշողութեան կարողութիւններն խպառ կը մեկնին , վերջապէս սարսափելի մելամաղձութիւն մը անոր վրան կը տիրէ , կեանքէն կը ձանցրանայ նա , և ալ այն մարդը է ներուստ մւառած է , որոց հետեւանքը կամ խելագարութիւն է և կամ անձնասպանութիւն : Իբր ապացոյց մեր այս ըսածներուն երկու հռչակաւոր բժշկաց վկայութիւններն յառաջ կը բերեմք հոս , « Սարսափելի է , կըսէ Հուֆէլանոտ , բնութեան կնիքն որ այսպիսի մէկու մը վրայ կը կնքէ , նա թառամեալ վարդ մ'է , ծաղկած միջոցին չորցած ծառ մը , շրջող մեռեալ մը , կենդանի դիակ մը : Այս , այն համր մոլութիւնը մարդուս ամեն եռանդն կը մարէ ու կեանքը կապառէ , և չմնար այլ ինչ քան անզօրութիւն և մահուան տժդունութիւն թառամեալ մարմնոյ և տխրութիւն մտաց , այնպիսիք խիստ քիչ կը խօսին և ան ալ ստիպմամբ . ալ հոգւոյ կայտառութիւնը մարած է : Կայտառ երիտասարդ-ք և աշխոյժ պատանիք այս մոլութեան գերի լինելով ապուշ և փթամիտ կըլլան , անոնց խանդավառ երեւակայութիւնը կը խանդարի երիտասարդ-ք իդական սեռէն (և կանայք ալ արական սեռէն) մին աեսնելու որ ըլլան այլ և այլ հետական բաղձանքներով կը յուզին : Երկիւղ , զղջում , ամօթ և յուսահատութիւն այս սարսափելի վիճակը բուժելէ աւելի կը ծանրացնեն , վերջապէս այսպիսիք անձնասպանութեան կը ձեռնարկեն , անձնասպանութեան՝ որոյ ոչ ոք առաւել ենթակայ է քան գիճութեան գերի

լինողն , և ասի զարմանալի չէ , զի այնպիսիք շրջուն մեռետու լինելէ աւելի կատարելապէս մեռեալ լինիլ կուզեն » :

Տօքթօր թեսո ալ հետեւեալ կերպով կը խօսի : « Գիճութեան պատճառաւ մարդկային մարմնոյ մեքենայն կը խանդարի , յիշողութիւնը կը կորսուի , երիտասարդն իւր կայտառութեան օրերուն մէջ ծերութեան ամեն նշաններն իւր վրայ կը կրէ և կղդայ . ամեն դործի անյարմար և անընդունակ կը լինի և աշխարհու և ապրիլն ծանր ու անպիտան բեռ մը կը համարի նա և կրմէ ու այլոցմէ դժգոհ կը լինի . երկիւղ մը նորա մէջ կը տիրէ որ անտանելի ցաւէ մ'ալ առաւել խիստ է . խղճի խայթն է այն որ երթալով կաճի և մահէն ետքն ալ դժոխոց մէջ անշիջանելի հրոյ փոխուելով յաւիտեանս յաւիտենից զինքն կը լափէ ու կը մաշեցնէ : Վերջապէս այս աղետներէն զատ ուրիշ սարսափելի հարուած մի ալ կայ որոյ անվրէպ ենթակայ կը լինի գիճութեան հետեւողն . ասիկայ է ան որ եթէ անանկ երիտասարդ մը ամուսնանալու ըլլայ որոյնց հայ մինուր լինի , կամ եթէ տղաքներ ալ ունենայ , տը կար , անզօր , վատառողջ , իմի բան խեղճ ու թշուառ արարածներ կըլլան անոնք :

Երբ սերմն շույլաբար վատնուած է , մնացած մասը , իւր բնական յատկութիւնն կորսնցը-նելով , անզօր , ջրոտ և տկար հեղուկ մը կըլլայ , որուն մէջ մարդկային կենաց բողբոյն չկայ : Այսպէս գիճութեան հատեւողն ինքզինքը աշխարհիս ամենամեծ բերկութենէն կը դրկէ , որ

Է ծնողական ուրախութիւնը , զի ի՞նչ ուրախութիւն կրնայ դգալ մարդ երբ իր տկար , վատառողջ , խեղանդամ և անդօր ջիղերով մանկանցն վրայ նայի . անմեղ մանուկներ որոնք հօրերնուն անէծքը իրենց վրայ կը կըեն . ողորմելի տեսարան . ստուգիւ այն թշուառ մանկանց կրած տանջանքներն իրենց հօրը անէծք և դատապարտութիւնն են :

Ինչ որ է սերմը նոյն է նորա պտուղը . սարսափելի վճիռ : Հունաը ինչպէս որ լինի նոյնպէս լինի հունձքը . ի՞նչ որ ցանես , նոյնը հընձես . ասի ճշմարտութիւն մ'է այս աշխարհիս վըրայ , և նոյնն է նաև աս կեանքէս ետև յաւետենականութեան մէջ : Այսպէս գիճութեան գերի լինողը ինքզինքն նիւթապէս և բարոյապէս չարաչար կապաննէ . այս անտանելի կացութեան մէջ գտնուողներն միայն քրիստոնէական սուրբ կրօնին մէջ իրենց մխիթարութիւնն և բժժքութիւն կրնան գտնել եթէ երբէք կամելց ըլլան :

~~~~~

ԳԼՈՒԽ Բ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՊԱՅՈՅՅՔ ՄԻՆՉԵՒ ՑԱՐԴ
ՀՍՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԳԻՃՈՒԹԵԱՆ ԳԵՐԻ
ԵՂՈՂՆԵՐՈՒՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ ՔԱՂԵԱԼ

Գիճութեան մարմնոյ վրայ յառաջ բերած անթիւ դառն հետեւանքներուն վրայ այսչափ խօսելնէս զինի , կրնայ ըլլալ որ բազումք տակա-

ւին խստացեալ մնան և ժպրհին մինչեւ իսկ խորհիլ թէ նկարագրածնուս պէս աւերիչ և կողծանիչ մոլութիւն մը , ախտ մը չէ գիճութիւնը . ուստի թող գիճութիւն ընտղներն , իրենք իրենց վիճակին գառնութիւնը ստորագրեն :

Տարիքն առած մարդ մը Տօքթոր թեխոսի հետեւեալ նամակին գրած է .

« Պատանեկութեան ատենս գիճութեան վատմոլութեան տուի ինքինքս , թէեւ յետոյ բաւական խորհելով նորա հետեւանացը վրայ այն զազրալի ունակութիւնս թողուցի . սակայն աւաղ , զի շատ ուշ էր . ալ ժամանակը անցած էր : Այժմ իմ բոլոր ջեղերս գիւրազգուաց և գիւրագրդիու եղած են , ասկէ զատ վրաս անզօրութիւն մը տիրած է . ամեն բան ինձ զզուանք կը պատճառէ : Վրաս երկիւղ մը կը տիրէ որ չեմ կրնար պատմել : Մնացած ուժս ալ սերմնահոսութեամբ ըսպառելու վրայ է : Դէմքս՝ մեռելի մը երեսին նման գունատ է և կապարի գոյն մ'է ստացած , այնքան զօրութենէ ինկած և ուժաթափ եղած եմ որ ամեն շարժումինձ խիստ դառն կը թուի . սրունքներու հաղիւ թէ զիս կը տանին , սենեասրունքներու հաղիւ թէ զիս կը տանին , սենեասրունքներու հաղիւ թէ զիս կը տանին :

Մարտկէս գուըս երեւլյ չեմ վատահիր անոնց : Մարտկէս զօրութենէ ինկած և ուժաթափ եղած եմ որ ամեն շարժումինձ խիստ դառն կը թուի . սրունքներու հաղիւ թէ զիս կը տանին , սենեասրունքներու հաղիւ թէ զիս կը տանին :

Այնքան խանդարեալ է որ ճաշէն երկու երեք ժամ յետոյ ամբողջ կերածս առանց փոփոխութեան գուըս կը տամ . կուրծքս մաղատապ (պալկամ) լիցուն է , և հազարյ ալ զօրութիւնս այնքան խանդարեալ է ահա իմ սոսկալի վիճակս և ամեն օր նորանոր տանջանքներ անոնց վրայ կաւելնան . մէկ խօսքով չեմ կարծեր որ աշխարհիս

վրայ երբէք ինձ նման թշուառ արարած մը ապրած է : Եթէ կրօնքն զիս չսանձահարեր շատոնց այս դառն կենացս վերջ մը տուած էի :

Նոյն բժիշկին ուրիշ անձ մ'ալ հետեւեալ խօսքերն դրած է : « Պեռափիթիթ հասակիս մէջ , կարծեմ ութ կամ տաս տարեկան եղած տտենս , (սարսափելի) այն կործաճիչ մոլութեան , ըսել կուղեմ գիճութեան սկսայ՝ որ իմ բոլոր մարմինս կանուխ աւերեց : Քանի մը տարիէ ի վեր բոլոր ուժս կորսնցուցած եմ , չեղերս անդիի ծայր տըլ կար ու անդօր են , ձեռքերս ընաւ չեն բռնել և շարունակ կը դողդղան ու կը քրտնին : Ստամոքս խիստ կը ցաւի , ինչպէս նաեւ թեւերս , պրունքներս , կռնակս ու կուրծքս . շատ կը հազարմ , աչքերս աղօտած են , ախորժակս դազանի անյագութեան աստիճան հասած է , սակայն և այնպէս օր ըստ օրէ նիհարանալու վրայ եմ , և օրէ օր դէմքս ու մարմինս կը խանդարուի » :

Մէկ ուրիշն նոյն բժիշկին սապէս դրած է : « Պատանեկութեանս մէջ գիճութեան գերի եղայ , որով առողջութիւնս ի սպառ խանդարուեցաւ . չեմ գիտեր թէ գլուխս ո՞ւր է . շարունակ գլխու ցաւ և գլխոյ պտոյտ ունիմ . կը վախնամ որ մի գուցէ կաթուածահար ըլլամ : Աիրտաքոնուած է . խիստ դժուաւ շունչ կառնեմ . ըստամոքս շատ հեղ կը ցաւի . փորս մերթ հոն մերթ հոս կը ցաւի , բոլոր օրը թմրած , վհատեալ , ծոյլ և ձանձրափ կեանք մը կանցնեմ . գիշերն ալ քունս խիստ անհանդիստ է . մարմինը յաճախ կը քերուի . գոյնս կապարի նման

գունատ է . աչքերս պղտոր են ու կը ցաւին , բերանս գիշէ կը հասի , ա՛լ կեանքէս ձանձրացած եմ : Քալած ատենս հազիւ հազ երկու հարիւր քայլ կը նամամ առնել առանց նստելոյ և հոգնութիւն առնելոյ . կերակուր ախորժակով կուտեմ , սակայն ասի ինձ տանջանք մ'է քանզի կերակուրէն ետեւ ստամոքսս ցաւ մը կը մըտնայ , այնպէս որ շատ անգամ ստամոքսս նորէն պարպելու կ'ստիպուիմ . քանի մը բառ կարդալէ զիսի աչքերս կը ջրտոին ու կը ցաւին . շատ անգամյակամայս կը հառաջեմ :

Դարձեալ նոյն բժիշկին ուղեալ հետեւեալ նամակն ալ գիճութեան մոտային կենաց հասցուցած չարեքները կատորագրէ :

« կզգամ որ կուրժքիս մէջ եղող բոցը մաւելց վրայ է . իմ առաջի կայտառ զգացումներս փնացած են . հազիւ թէ երեւակայութեանս մէջ քանի մը կայծեր գեռ կը պլազան , անոնք ալ զազրախ նկարներով աղարտեալ են . ամեն բան ինձ երազի մը նման կը թուի , իմ էութիւնս հազիւ հազ կզգամ , ո և իցէ բան մը խիստ գըմեռար կը մրանեմ , ի մի բան կտեսնեմ որ վերջո մօտեցած է թէեւ լսաւ կը քնանամ , լսաւ ախորժակ և բաւական առողջ տեսք մ'ունիմ » :

Ուրիշ շատ նամակներ ալ կան գիճութեան ճիրաններուն մատնչած այլեւայլ անձանց մէ երեւելի բժիշկներու գրեալ , սակայն տառնք բաւական են ապացուցանելու թէ գիճութիւնը մարդու ինչ աստիճան դառն և սարսափելի վիճակի մը կը հասցնէ . Տար երկինք որ այս նա-

ժակներն կարդացող երիտասարդներն և դեռահասակ պատաճիք շուտ ընդ փոյթ այն աւելիչ և կործանիչ մողութեան ճանկերէն ինքզինքնին ազատելու յորդորուին :

«ՃԵՇ»

ԳԼՈՒԽ Թ.

ԳԻՃՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՅ ԵՂՈՂ ՄԻ ՔԱՆԻ
ԱՆՉԱՆՅ ԱՀՐԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տասը դասընկերներէո հնաց - կըսէ բարեկամացս մին - գիճութեամբ կանուխ գերեզման մըտան , Երիւ-+ը ախտաւոր և անվիտան մարդիկ եղան , և մին ալ գեռ յիմարանոցը պահուած է , այնախի յիմարանաց մը ուր լոկ անբուժել յիմարներն կը պահուին . Այս վերջինը ամենէն առաւել տաղանդաւոր էր անանի որ միշտ իրմէ բան կը սովորէին.ք . Միզուագիտութեան , փիլիտոփայութեան , մաթեմաթիքական գիտութեանց և երաժիշտութեան ձիրքեր ունէր նա . ուսմունքը անը խաղալիք մ'էր . զօրաւոր և կայտառ պատանի մ'էր ան . խաղի մեջ զօրութեամբ և յաջողութեամբ զամենը կը գերազանցէր : Երբ տապին և վեց տարեկան եղաւ իր վրայ փոփոխութիւն մը նշանարեցին.ք . գոյնը կարմանցուց և գեղնեցաւ , երեսին վրայ շարաւալից վշտիկներ եղան , քարուածքը անորոշէր , պաղնայաւած.ք մը անէր , յաճախ կը տկարանար , այլ եւս չէր ուռ զեր լուացուիլ ոչ ալ մտզերն սանարել , պիզճ :

ազտօտ և թափած մազերով կը շրջէր . բերանն ալ խիստ գէշ կը հոտեր և ապուշ կերպով միշտ առջին կը նայէր : Օր մը իր սենեակին պատուաններն սեւ լաթերով և աշխարհացոյցներով ծածկեալ տեսնելով երբ պատճառն հարցուցին.ք « լցովը չեմ ուզեր տեսնել » պատասխանեց , հասկըցան.ք որ մելամաղձութիւն եկեր էր վրան . Դասախոսութեան ժամանակ խանդարեալ խորհուրդներով գիտիկի մը պէս կը կենար . նորա մըտային կարողութիւններն փճացած էին . նա մեզի համար հանելուկ մ'էր . արքեցութեան ալ սկսելով բարարովին ուժաթափ եղաւ . յետոյ գողութեան սկսուաւ , անկէ ետեւ յաճախ խելագարութեան նշաններ կը տեսնուէին իր վրայ . տարի մը ետքը միտքը բոլորովին խանդարուելով կատարեալ խելագար մը եղաւ . բժիշկներն յոյսերնին կտրած են իրմէ . նա այժմս անասնոյ մը նման կեան.ք կանցնէ » :

Հսէ , ով երիտասարդ , այս խեղճ պատանւոյն ցաւալի վախճանը , և լաւ իմացիր որ գիճութիւնն էր միայն այս աղնիւ կեան.քը որդիի մը նըման ուտելով փճացնողը :

Գուցէ ընթերցողն հարցնէ թէ այն ուսանող պատանւոյն վարժապետներն ինչու անոր հոգչտարին . սակայն անօնք ուսուցուած էին և ոչ թէ ուսուցուածի , և գոհ կը լինէին եթէ նա միայն իր գասերն լաւ պատրաստէր . սակայն այս ալ անուըսանալի է որ եթէ անոնցմէ մին զանի իր սենեակին տանելով հոն բարեկամարար , միրով և գութով զանի առանձին խրատէր , անշուշտ բու

լորովին ապարդիւն և անօդուտ շեր ըլլար այն
տարաբաղդ պատանւոյն իւր յորդորանքը Տար
երկինք, որ մեր վարժապետաց ամեն մէկը դաս
տիարակիներ լինէին և իրենց տռած դասերուն
հետ նաեւ աշակերտաց բարյական վիճակին վը-
րայ ալ հոկեին վութաջան ուշադրութեամբ :

Ուրիշ պատանի մ' ալ որ խիստ քաջառողջ և
սքանչելի տաղանդներու տէր էր, տասնեւթեց
տարեկան հասակին մէջ գողդոջուն ծունկերով
ասդին անդին կը չընէր. այնչափ անզօր և տկար
էր նա որ եթէ մատով հրէին, ինչպէս որ կրսեն,
թաւալգլոր յերկիր կը տապալէր. այս անձը իւր
23 ըդ ծաղիկ հասակին մէջ գերեզման մտաւ,
ինչ էր իւր մահուան պատճառը. – գիճութիւն :

Այլ սարսափելի իրողութիւն մի լուարուք,
գեղեցիկ տաղանդներով և քարձր ձիրքերով զար-
գարեալ գեռահասակ երիտասարդ մը սոյն մո-
լութեան ենթակայ եղած էր. գիճութիւնը նորա
կենաց թելն օր ըստ օրէ կը մաշեցնէր, թէեւ
յարտաքուստ զուարթ ու կայտառ կերեւէր,
երբեմն իւր մտերմագոյն բարեկամաց միոյն իր
ներքին վիճակին վրայօք տեղեկութիւն կը տար,
Օր մը նա իր ընկերաց շընանին մէջ ուրախ զը-
ւարթ կզբունուր, ի տուն վերադարձած ատեւ
նը օդը աւրուած և երկնից կապոյտ կամարը անձ-
րեւարեր սեւ ամպերով ծածկեալ էր, փոթոր-
կալից հովեր սաստկապէս փշելով նորա սենետկին
պատուհաններն կը դղբացնէին և ծառերուն
թառամեալ տերեւներն յերկիր կը թոթափէ-
ին. յանկարծ երիտասարդին վրայ տիրութիւն մը

եկաւ. թառամեալ տերեւներուն շարժման շընջը
եր կենաց պատկերն կը ներկայացնէին իրեն.
յուսահատութեամբ լցուած սենետկին դուրս
վազեց. թանձր մթութիւն մը կը տիրեր հոն.
մէյ մ'ալ փայլակի նման լոյս մը տեսնուեցաւ,
և ճայթիւն մը լսուեցաւ. Գիշերը անցեր էր, ա-
ռաւ օտեան, արշալյոն կարմրափայլ ծագելով բը-
նութիւնը դոյզն ինչ կը լուսաւորէր. ամեն բան
գարձեալ իր հանդարտութիւնը ստացած էր.
դաշտին վրայ մեռած մարդու մը դիակին դըո-
նուեցաւ որ հրացանի գունտէ զարնուած էր,
ատրճանակն ալ գեռ հոն դիակին քովն էր. այն
երիտասարդն էր այս դիակը որ անձնասպանու-
թեամբ կը կեանքն վերջացուցած էր, իր ընկերան
կիցներն անոր ցաւալի վախճանը կմանալով նորա
ցուրտ մարմինն հողին մէջ ամփոփել եկան. տը-
խուր տեսարան մ' էր այն. մատուան զանդակինեւ-
ըը տիսուր կը հնչէին երբ իրենց բարեկամին ան-
շունչ և անկենդան դիակին պարունակող գագալն
գերեզմանին մէջ իջեցուցին. մահուան սարսուռ
մը և ահարկու սարսափ մը պատեց զիրենք,
այսպէս անոնցմէ իւրաքանչիւրն տիսութեամբ
զգածեալ բաժնուեցան այն տեղէն. Ականջ ու-
նեցոյն թող լսէ. Հայ երիտասարդ, լոէ և սար-
սափէ, և եթէ դուն ալ այս կենսասպառ մո-
լութեան շղթայներուն մէջ բռնուած ես, ջանա
որ վայրկեան չկորսնցուցած կարենաս ազատիլ:

Սոյն մըլութեան պատճառաւ ուրիշ անձի մը
թողոր կերպարանքը փոխուեցաւ. նորա խոր ա-
չերէն խանդարեալ հոգի մը դուրս կը հայէր. նա

այն առաջին մելամաղձութեան ենթակայ եղած էր որ վերջապէս խելադարելով ժամանակ մը յիմարտանոցին մէջ ի զուր դարմանուելէն ետք օր մը քանի մը անձանց քով կայնած ատեն վը բան գողած և ջղածգութիւն գալով վեր ցատկեց և մեռած գետինն ինկաւ :

Այլ պատմութիւն լսենք : Մարդուն մէկը գիճութեամբ այնքան խանդարուեցաւ , որ պարուաւորեցաւ իր վարած պաշտօնէն հրաժարիլ , նա անընդհատ կը գանգատէր թէ ինքը մեռեալ է , և թէ ալ գործ մը չկրնար ընել . վերստին առաջանալէ բոլորովին յոյն կտրած էր , այսպէս այլոց և իրեն ծանր բեռ մը ըլլալէն ետեւ յիմարանոցը տարուեցաւ . քիչ ատենէն նորա մարմինը գերեզմանին յանձնուեցաւ : Ուրիշ երիտասարդ մը սր այս մոլութեան պատճառաւ յիմարանոց դրուեցաւ , նա միշտ կը գանգատէր թէ իր գլուխը բոլորովին պարապէտէ թէ ոչ կրնայ խորհիլ և ոչ ալ գործել : Այս տարաբազրը քիչ ատենէն մեռնելով նորա դիակն յոշուեցին , գլուխն ալ քննելով տեսան որ յիշաւի գանկը պարապ և ուղղին սպառած էր :

Ահա այսպէս գիճութեամբ մարմնոյ կենսական հիւթերն կը չորնան ու կսպառին : Անմիտ պատճնի , շուտով փախիր այս ամենի գաղանին ձեռքէն . քանզի եթէ վայրկեան մը յապազիս , անկարելի լինի քու աղատումուր :

« Քսան երեք տարեկան մարդ մը կը ճանչնամ » կըսէ բժիշկ մը . « որ գիճութեամբ մարմնոյ բոլոր ջիզերն խանգարելէ ետեւ լուսնուու-

թիւն կոչեալ ախտին ենթակայ եղաւ և ինչ առ տեսն որ այս մոլութիւնը ի գործ դնէր նոյն ատեն ախտին հարուածներն կը կրէր . իր կւնակը սառատիկ կը ցաւէր , նա քիչ մ'ատեն այն վատ ունակութիւնը թողուց , ես ալ գեղելով գիճութեան գրգիռէն բուժեցի զինքը , և մինչեւ իսկ ախտէն ալ աղատել կը յուսայի , քանզի հարուածներն բաւական տաեն չպատահեցան . նա իր զօրութիւնն վերստին ստացաւ , ախորժակը և քունը լսւ էին . երեսին գոյնն ալ տեղը եկաւ մինչդեռ առաջ մեռելի պէս տժգոյն էր : Սակայն նա վերստին իւր մոլութիւնը գործել սկսաւ , և այն սարսափելի ախտն ալ իւր հարուածներն քաղմապատկեց , մինչեւ անգտմ փողոցը ախտէն բոնուելով տնզգայ գետինը կիյնար . օր մ'ալ նա իր սենեակին մէջ մեռած գտնուեցաւ որ անկողինէն լինալով արեան մէջ խեղդամահ եղած էր :

Արդ ընթերցող , կը հարցնեմ քեզ , ինչ տարբերութիւն կայ ատքճանակի հարուածով , կամ կախելով և կամ ծավը նետուելով ինքնինք սպաննողին . այս կերպ գառն մահով մեռնողին մէջ . միթէ երկու քն ալ անձնասպանութիւն չէ :

Վերջին օրինակ մ'ալ տալով վերջացնենք այս գլուխը :

« Բարեկամացս միակ որդին , - կըսէ Զուիցերիացի բժիշկ մը - տասն և հինգ տարեկան ծաղիկ հասակին մէջ լուսնուութենէ բոնուելով չարաչար մեռաւ , որոյ պատճառոն լոկ գիճութիւնն էր , քաղաքին բոլոր երեւելի բժշկաց

ճարտարութիւնը զուր տեղը և գործ դրուեցաւ զայն բուժելու : Դարձեալ 12-13 տարեկան աղջիկ մը կը ճանշնամ որ այս զալլալի մոլութեան հետեւելով թռքախտ եղաւ , ասկէ զատ փորբ ու ռեցաւ , և շարաւալից արեան հոսում ունէր , և մէզն չէր կարող պահել . թէեւ բժշկաց խնամատարութեամբը նորա վիճակը վտքր վնչ բարեռքեցաւ , սակայն նա խիստ նիհար և անզօր է , և այն գառնագոյն հետեւանքներուն ենթակայ է որ գիճութիւնը ուշ կամ կանուխ մարմնոյ վրայ յառաջ կբերէ » : Ինչ որ ըսուեցաւ գիճութեան նկատմամբ շնութեան (*) ալ կը վերաբերի : Հազարաւորներ մաշած ու սպառած են դղուելի հիւանդութիւններով և կանուխ գերեզման մըտած են ինքինքնին շնութեան տալրվ : Այս ալ ըսելց չեմք վարանիր որ երբեմն մինչեւ իսկ աւմուսնութեան մէջ ալ այն սարսափելի հետեւանքներու ենթակայ կըլլան մարդիկ երբ չափաւորութեամբ ոսկեղէն կանոնն մոռնալով անյագութեամբ և շռայլաբար վարուին ամուսնական կենաց մէջ (**) :

Այն ահարկու անեծքներն որոնք գիճութիւնը մարդուս վրայ կարկուտի նման կը թափէ ,

(*) Սորա մարդուս տուած անհամար վնասուցը վրայ այլ տետրով մը խօսելու մոտադիր ենք :

(**) Տես «Գաղտնիք Ամուսնութեան» ախատասիրութեանս մէջ այս նիւթիս վրայ ըսուածները . Տպագրութիւն Յ. Գալաֆեան . 1872 : Գին 4 ½ դշ :

եթէ մէկը իւր վրայ եկած չտեսնէ չըլլայ որ իւր մոլութիւնը անվտանգ բան մը համարելով անոր մէջ յարատեւէ , զի այս սարսափելի թոյնը իր զանազան ազդեցութիւնները մերթ շուտ , և մերթ ուշ ի գործ կը դնէ , երբեմն միտքը կը խանգարէ , երբեմն մարմինը , մերթ աչաց տեսանելի գործարաններն , մերթ ներքին և անտեսանելի գործարաններն իւր ճարուածներուն առարկայ կընէ :

Գիճութեան գերի լինող և կործանման մատնուած մարդը թէեւ երկար ատեն առողջ , զըւարթ և կայտառ պլուտի , սակայն նորա կենաց ծուծը սպառող թոյնը կամաց կամաց իր ներդործութիւններն կընէ մի և նոյն ատեն , և նա առանց զգալու . կործանումը զայն կը պաշարէ :

Այլ սակայն գիճութեան որս և նորա գառն հետեւանաց տուարկայ եղողներէն ոչ ոք առողջանալէ յոյսն կտրելու է , ոչ ոք յուսահատութեամբ լեցուած «ալ ինձ յոյս չկայ . ալ ինձ համար դեղ և դարման շրաբար ըսելով իր մալութեանը մէջ ինքինքը կորսնցնելու է . ոչ . թող մէկը չը յուսահատի , զի կայ դեղ մը . դարման մը կայ որ կընայ իներքաւստ բուժել և բժշկել մարդուս հոգին և կարող է նաև մարմնոյ ցաւերն ալ մեծաւ մասսամբ բառնալ : Արդ , ով յուսահատեալ , +ջ լե՛ր . հաւատո՞ւ և յուսո՞ւ :



ԳԼՈՒԽ Ժ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՐՄԱՆ ՎԱՍՆ ՀԵՏԵՒԱՆԱՑ
ԳԻՃՈՒԹԵԱՆ

Նախընթաց գլուխներուն մէջ տեսանք որ
գիճութիւնը մարդուս երկու կերպով կը փասէ .
նա արտաքուստ մարմինն ու իւր անդամները կը
խանդարէ , կաւրէ , կապականէ և կը կործանէ ,
և մի և նոյն ատեն իներքուստ թոյն կը սփռէ
նորա անտեսանելի մասին մէջ , աղնիւ և ամե-
նանուրբ գործարաններն և մտային գերազնիւ
կարողութիւնները եղծելով ու խոպառ խանդա-
րելով : Աւստի գիճութեան թոյնովը թունտոր-
եալ և նորա անեծքին տակ ճնշող ու հեծող
խղճալի արարածին համար ալ երկու տեսակ օգ-
նութիւն , պաշտպանութիւն , գեղ և գարման
կարեւոր է . ներքին և արտաքին :

Ներքին աւերման գարմանին միակ աղբիւրն
մեր սրբազն կրօնքն է . այնպիսին Սուրբ Աւե-
տարանէն միայն կրնայ իրեն գարման և օգնու-
թիւն յուսալ . լոկ բարոյականութիւնը չէ կա-
րող բուժել զայն . խրատ , յանդիմանութիւն
սպառնալիք , աղաչանք և յորդորանք , բոլորո-
վին գիճութեան յարող և նորա շղթաներու մէջ
կապեալ և կաշկանդեալ երիտասարդին քար
կտրած անգայ սրտին զարնուելով կը փշրուին
և անօդուտ կըլլան , այլ պէտք է անոր ճանչնալ
գիճութեան մեղք մ' ըլլալն և իր յանցանքը

Խոստվանելով բարերար Աստուծմէ թողութիւն
ինդրել և Անոր օդնութիւնը հայցել , բոլոր մո-
լութիւններն թողլով նոր կեանք մ' սկսել և
վարել կարողանալոյ համար . ուստի այս տեսակ
ընթացք մը սկսելոյ համար Սրբազն Մատեանին
ընթերցման , աղօթքի և մեղաց խոստվանու-
թեան միջոցներուն գիմերու է : Այս է ահա քու
առաջի պարտաւորութիւնդ առ Աստուծմ , ով
խեղճ երիտասարդ , յորմէ հետէ մարդասէր և
բարի անձի մը , կամ վստահանալի և բարեպաշտ
բժշկի մը պէտք է սիրադ բանառ , դաղնիք
յայտնեա . յայտնէ և խոստվանէ անոր քու մո-
լութիւնդ , ամենաայինչ սեպած կէտդ անգամ ան-
կէ չը ծածկելով , և ամենայն փութով հետեւէ
ու հնազանդէ քեզի տրուած խրատներուն : Ա-
հա այսպիսի խրատական տեղեկութիւններ ալ
կը դնենք հոս ընթերցողաց համար :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԳԻՃՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՂՈՂ ՍՈՒՐԿԱՆԵՐ

Դատարկաշրջութիւնը ամեն մոլութեանց աղ-
բիւրն է : Մտային կարողութիւնք անգադար կը
գործեն միշտ և առանց զբաղման երբէք չեն
կրնար ըլլալ , միտքը կամ բարի և աղնիւ բաներ
պիտի խորհի կամ չար ու վատ բաներ : Անոնք որ
բարի բաներ չեն մտածեր , անշուշտ չար բաներ
մտածելով իրենց միտքը յիմարական և սնուի

խորհուրդներով կապականեն, ուսկից անկարգ ցանկութիւններ և վատ բաղձանքներ կը յզանան: Ասի տեսակ մը մոտիին գիճութիւն է, որոյ ենթակայ եղողն խորհելոյ կարողութիւնը և զօրութիւնը բոլորովին կը կորանցնէ, և նորա միտքը պիղծ և զաղիր երեւակայութիւններով և հեշտական գաղաքարներով խոպառ կը խանդարի. այս խանդարումը, որ խելագարութեամբ կաւարտի, դատարկաշրջութեան պատուին է. ուստի ժիր ու գործունեայ եղիք, ով երիտասարդք, եթե կուզէք գիճութենէ և նորա ահուելի հետեւանքներէն ապահով ու աղատ մնալ. զի մարմնական և մոտաւրական աշխատութիւնը յիմարական և պիղծ խորհուրդներն կը ցրուէ, կամքը և զօրութիւնը կը բարելաւէ և հաստատ վիճակի մէջ կը պահէ զանոնք, առողջ կեանք մը կը պարդեւէ, և մարդուս աչքին առջեւ այնպիսի բարձր ու վրամեմնպատակներ կը դնէ, որոնց հետամուտ եղող երիտասարդին բոլոր էութիւնը կատարեալ ու զղութիւն մը կառնէ:

Կանուխ հեռացէք նաեւ փափկութենէ: Զափազանց տաքութիւն տուրող փետուրէ լաւ տեսակ անկողինները վնասակար են. բուրդէ, ծիումազէ և խոտէ անկողիններն աւելի լաւ են: Մարմինը չափազանց տաք պահող, նեղ ու փափուկ հանդերձներն, նաև ամեն տեսակ ոգելից ըմբակեքներն ու չուայլ կերուխութերն, ասոնք մենքը մարդու գիճութեան առաջնորդող մէյէկ զօրաւոր պատճառներ են:

Երկար ժամանակ անկողինը մնալն, կամ ու

ըիշ խօսքով, խիստ կանուխ պառկիլ և շատ ուշ ելնելը նաեւ գիճութեան պատճառ կրնայ ըլլալ երբեմն. ասի միտքին պիղծ խորհուրդներով զբաղելուն և մնանելուն միջոց կը լայ: Ուստի այս կէտերս լաւ ուշադրութեան առնուելու են, մանաւանդ գիճութեան գերի եղողներն ջանալու են հետեւիլ անոնց: Ուտեղեաց, խմելեաց, քնոյ և հանգերձներու նկատմամբ մասնաւոր տեղեկութիւններ և կանոններ լիովին կը գտնուին մեր «առողջ երջանիկ և երկար կեանք» անուն աշխատամիքութեան մէջ (*):

Հեռացիր անշափաւորութենէ և որկրամութենէ:

Որ և իցէ բանի մէջ անշափաւորութիւնը սոսկալի կերպով մարդուս վնաս կը հասցնէ, նա մանաւանդ որկրամութիւնը որ մարդս ծոյլ ու թոյլ կընէ, զգայութեան և խորհուրդածութեան պարզութիւնը կը պղտորէ, մտաց անդորրութիւնը կը յուզէ, որով հեշտական ազդեցութիւնք և խորհուրդք միտքը գրաւելով կը խանդարեն զայն. մէկ խօսքով մարդու բարոյապէս կըսպաննեն. իրաց այս վիճակին մէջ խիստ դժուար է նոր ինորոց յառաջ եկած գրգիւններն յաղթահարել և անձը սանձել:

Հեռացիր թեթեւամիտ, անբարոյական և մոլի ընկերներէ:

(*) Կ. Պոլիս տպագրութիւն Գ. Զարդարեան 1872. 30 երեսէ բաղկացեալ. գլն 3 պշ:

վատ ընկերակցութիւնք բարի վարքն ու
բարքը կապականեն . գրդոխ խօսակցութիւնք
մոտաց մէջ կայծեր կարձակեն և պիղծ խորհրդոց
մնունդ կոտան : Ի մի բան վատ ընկերներն մար-
դըս վատ կընեն և ամեն տեսակ մոլութեանց և
վատութեանց կառաջնորդեն : Աւստի որու հետ
որ ընկերանաս լաւ ուշադրութիւն ըրէ և քեզի
ընկեր ընտրածդ լաւ փորձէ :

Հեռացի՛ր իգական (օրիորդք ալ արական)՝
սեռէն ու է մէկուն հետ ոերտ և մուերիմ յարա-
բերութիւն ունենալէ : Ասով ըսել չեմ ուզեր որ
ընկերական կեանքն թողլով առանձնաթեան
մէջ ասլրիս . այլ պարկեշտութեան սահմանէն
չանցնիլ կը խրատեմ :

Սիրահարական լիտի վէպեր , անբարոյական
գրուածքներ ու պատմութիւններ կարդալէ զգոյշ
կեցի՛ր :

Խօսքերնիս հանճարեղ վսեմ միտքերու ծր-
նունդն և ճարտար գրիչներու արդիւնքն եղող
վիպասանութեանց համար չէ , որոնք յաւետ
մարդուս միտքը կը կրթեն և ճաշակը կը բարձ-
րացնեն , զորոնք մարդու կարդալով ուրիշն փոր-
ձառութենէն ինչ ինչ պարագայից նկատմամբ
բազմաթիւ օգուտներ և խրատներ կը քաղէ ,
այլ վատ և լպից գրքերուն համար որոնք մար-
դուս սիրտն ու միտքը կը պղծեն ու կը թունա-
ւորեն , խորհուրդներն կաղարտեն , երեւակայու-
թիւնը հեշտական նկարներով կը լեցնեն և ան-
թիւ աղետից պատճառ կըլան . գիճութեան գե-
րի եղողներուն մէջ բազմաթիւ են անոնք որ այս

կերպով թունաւորեալ գերեզման մտած են :
Ուստի ամեն բան ուշագրութեամբ փորձէ և բա-
րին հաստատ բռնէ : ինչ բան որ ձեռքդ անցնի
մէկէն մի կարդար զայն , այլ խոհականութեան
տէր մէկու մը հարցու , եթէ դուն կարող չես
բարին չարէն որոշել այնպիսի մէկէ մը խորհութ-
հարցու թէ ինչ բան կարդալու ես և ինչ բան
կարդալու չես : Եթէ գիրք մը զգացումներդ կը
գրդոէ , մէկդի նետէ զայն որքան ալ հետա-
քըրքըական ըլլայ նորա պարունակութիւնը ,
նաեւ այն գրքերն որ մասնաւորապէն , կրօնքն
ոչինչ և անօդուտ բան մը ցուցնել կը ջանան
ձեռքդ անգամ մ'առներ , թոյն են անոնք :

Վերջապէս ինչ և իցէ կերպով զգացումներու
գրդում պատճառող տռիթներէ սարսափե-
լվի խուսափէ : Թատերական անբարական ներկա-
յացումներ , զարդարի նկարներ և պիղծ տեսա-
րաններ ո և իցէ մէկու մը գիճութեան ձեռքն
մատնուելու շարժառիթ և պատճառ եղած են
և կըլլան : Պարելաւ սովորութիւնն ալ խիստ վը-
տանգաւոր և վիասակար է թէ երիտասարդաց
և թէ օրիտրդաց համար , ամեն խոհուն անձ ա-
սոր ալ մոլութեան ճանապարհ մը լինելուն լաւ
համոզուած է : « Հեռու , հեռու » կը գոչէ Զայլը
Գերմանացի հռչակաւոր գրագետը , « Հեռու թող
կենայ պարահանդէսէն , ով որ ամօթխածութեան
և պարկեցութեան զգացումն իր կուրծքին մէջ
կը կրէ » : Քրամէռ երեւելի բժիշկը գիճութեան
վրայ գրած մէկ գրքին մէջ ամեն տեսակ պարէ
կզգաշացնէ զմարդ մինչեւ իսկ կէօթէ բանաւ-

տեղծին հեղինակութեանց ընթերցումը կարդիլէ
նա , պատանեաց հեշտութեան առաջնորդութելու
շարժառիթ համարելով զայն :

Յիմար է այն երիտասարդն որ պարահան-
գէսին մէջ քանի մը ժամ՝ զրօննելոյ համար իր
անդին կեանքը վտանգի կենթորկէ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԳԻՃՈՒԹԵԱՆ ԱՐԴԵԼԻ ԵՂՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ

Սոյն մոլութեան գառն արդիւնքներուն ցան-
կը , որ նախորդ գլուխներուն մէջ ներկայացու-
ցինք , ահ ու գողի մէջ կը ձգեն մարդս և վա-
խով մը կը պաշարեն զայն : Ուստի մտքիդ մէջ ե-
րեւակայէ գիճութեան ահռելի և երբեմն մին-
չեւ իսկ անբուժելի եղող հետեւանքները և
անկէ զերծ մնացող մարդուն քաղցր , անդորր և
երջանիկ վիճակը :

Գիճութեան սկզբանցը դէմ լաւ պատերազմէ :

Զանք ըրէ որ ցանկութիւն չդրդուի ի քեզ , և
չար խորհուրդներու կամքդ գերի մը ըներ : Ա-
ռաջին գրդումանց եթէ դէմ չը դնես , շուտով
գիճութեան գերի պիտի ըլլաս , ուստի փութա-
ջան եղիր թշնամոյն դէմ քաջութեամբ կոռուե-
լու : Ումանք թէեւ գիճութիւնը թողուկ կ'ուզեն
սակայն մտքերնին պիղծ երեւակայութիւններէ
և զազիր խորհուրդներէ ազատ պահելոյ փոյթ
չեն տանիր . ուսկէց միշտ նոյն զազրալի գործո-
ղութիւնը ծնունդ կառնէ : Գիճութեան և բղա-

խոհութեան ամեն տեսակին հետ պատերազմե-
լով կրնայ միայն մարդս անոնց գառն հետեւանք-
ներէն ազատ մնալ : Արդ քաջ եղիր . հաստատ
ու զօրաւոր կամք ունեցիր . երկուս մի լինիր
քու այսպիսի մեծ թշնամեացդ առջեւ :

Երբ գիշերը անկողնոյդ մէջ չար և պիղծ խոր-
հուրդներ միտքդ պաշարեն , և եթէ դուն ալ
չը կարենաս զանոնք մտքէդ հեռացնել , անկողնէդ
ցատկէ ել . կարդա , ժուռ եկ մինչեւ որ կարե-
նաս զանոնք մտքէդ վանել : իսկ ցերեկ ատեն
գաշտը գնա . շրջան մը ըրէ . պարտիզին մէջ աշ-
խատէ . փայտ կոտրէ . աղնիւ և ողջախոհ անձանց
այցելութիւն ըրէ . այսպիսի միջոցներով միայն
կրնաս մտացդ ու երեւակայութեանդ մէջ աիրող
պիղծ խորհուրդներն արտաքսել ու սպաննել :
Մինչեւ որ քուն չունենաս անկողին մ'երթար , և
արթնալուդ պէս անկողինէն ելիր . աւելի լաւ
կընես եթէ առաւօտներն կանուխ ենելով ա-
րեւին ծագելէն առաջ գործով մ'զբաղիս . երե-
կոյին ուտելիքդ և ըմպելիքդ ժամանակին առ ,
ասոնք չափաւոր և գիւրամարս լինելու են . երե-
կոյեան ընթրիքը անկողին երթալէ երկու երեք
ժամ յառաջ աւարտած լինելու է : Համեմեալ
աղի և յերմացուցիչ կերակուրներով , մանաւ անդ
երիկունը , ստամոքսդ մի բեռնաւորեր : կռնակի
կամ փորի վրայ մի պառկիր , այլ միշտ կողերուդ
կողմը , աջ կողմին վրայ պառկիլն յաւետ աղեկ է :
Զանա որ լաւ և աղնիւ խորհուրդներով և կրօ-
նական պարտքերդ անթերի կատարելով քնա-
նալու երթաս և անմիջապէս քնանաս : Բնաւ

ինքինքդ ապահով մի կարծեր , այլ հանապաղ մարմնոյդ վրայ հսկէ . եթէ գիճութեան դերին ես հստակ որով այլ եւս թողուլ այն վատ մօլութիւնը . սակայն լաւ գիտցիր որ առանց Աստուածային օգնութեան չես կարող առաջադրութիւնդ կատարել , ուստի Երկնից օգնութիւնն հայցէ կենացդ այն ամենազօրեղ թշնամոյն դէմ յաջողութեամբ պատերազմելու համար :

Գիճութեան հետեւողներուն մասնաւորապէս օգտակար է ոգիւթէ թարմ ջուր խմել , պաղ ջրով մարմինը , ինչպէս նաեւ ոտքերն լուալ և բաղ նիք երթալ . բազումք այս միջոցներով զօրացած , առաջի կայտառութիւննին ստացած և մարմնոյ կատարեալ առողջութիւն ու մտաց անդորրութիւն վերստին ձեռք բերած են : Ջրոյ բուժիչ և կազդուրիչ զօրութիւնը և նորա յարգը բազումք փորձաւութեամբ լաւ ճանչցած են , ուստի առ հասարակ զամենքը կը խրատեմք , տկարներն ու առողջները , որ ամեն օր աղբիւրի նար ջուրէն (ոչ թէ օրերով մնացած) առատութեամբ խմեն , սակայն երեկոյեան ուշ ատեն խմելն յաւետ ֆասակար է , զի մէզամանը երբ քնոյ ատեն չափազանց լի է , դրդում յառաջ կը բերէ . Նաեւ խիստ օգտակար է ամեն օր կամ ատեն ատեն բոլոր մարմինը պաղ ջրով լուալ , բայց ձմեռուան եղանակին մէջ , ինչպէս նաեւ այլ ցուրտ օրեր , սակաւ ինչ գաղջ ջուր դորձածելու է միանգամայն պաղ առնելէ ալ պէտք է զգուշանալ :

Երիտասարդաց հասար մարմնամարզութիւնը

խիստ օգտակար միջոց մ'է մարմինը զօրացնելոյ , միտքը զուարթ պահելոյ և բոլոր կեանքը քաջառողջութեան մէջ զարգացնելոյ (*) միայն թէ ծննդական գործարանաց գրգիռ տուող մի քանի շարժումներ զանց ընելու է : Մարմնամարզութեան կը հաւասարին և զանի կը դերազանցեն՝ խիկ մարմնական բուռն աշխատութիւնք , մանաւանդ երբ բացօդեայ տեղեր լինին նոցակեդրոնն . շատերու խանգարեալ , անզօր ու տը-կար մարմինը այս կերպով , այսինքն մարմնական բուռն աշխատութեամբ , կատարելապէս առողջացած է :

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԳԻՃՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆԱՑ ԲԺՇԿԱԿԱՆ
ԴԱՐՄԱՆ

Նախորդ գլխոց մէջ յիշած միջոցներէս զատ կան նաեւ բժշկական դեղեր որոնք գիճութեամբ խանգարեալ առողջութիւնը և գիշերային յաճախ սերմնահսութիւնը կրնան դարմանել և բուժել :

Գիճութեան հետեւանքները շատ անդամ ջօք-թօր թեսօի հետեւեալ դեղովք անհետացած են :

(*) Տե՛ս « Առողջ երջանիկ և երկար կեանք » աշխատասկրութիւնս . Երես 30 :

ԱՌ 8 տրմ. Քինսակի կեղեւ^(*) (cortex chinae, unciam unam) և 96 տրմ. ջրոյ մէջ (անզօրութիւնը չափազանց եղած ատեն ջրոյ տեղ նոյն չափ գինի առ) երկու ժամ լաւ դոցուած անօթի մը մէջ եփէ : Այս խառնուրդէն օրը երկու անգամ 16-24 տրմ. խմելու է : Սոյն գեղը զօրաւոր անձանց համար գրգռիչ կրնայ ըլլալ, ուստի զանի պատրաստած ատեն կամ ջրոյ քանակութիւնը աւելցնելով խառնուրդը մեղմացնելու է և կամ նոքապա գեղը բնաւ գործածելու չեն :

Քամուն (քերափիրի) ալ գերազանց գեղ կըրնայ ըլլալ այսպիսի պարագայից մէջ . ասի փետուրի մը խողովակին մէջ լցցնելով ունար ծխելու նման ծծելու է :

Երկո՞ պարունակող հանգային ջուրերն ըսպառեալ զօրութիւնը վերստին կը լցցնեն : Սէլթըրսըր-վասորը, (seltzer wasser) կոչուած ջուրը կաթի (մանաւանդ իշու կաթի) հետ խառնելով խմեն ալ շատ օգտակար է և զօրացուցիչ . կաթը, եթէ մարսողութիւնը կը տանի, զօրութենէ զրկեալներու համար լաւ սնունդ կրնայ լինիլ : Տօքթօր քռամէու կը կարծէ թէ ծննդական գործարանաց չափազանց գրգիռը կը նուազանայ և կը կանոնաւորի եթէ ջրոյ, գինիի և կաթի հետ առատ շատու (օրը մինչեւ 100 տրմ.) խառնելով խմուի . ասի նաեւ ըստ նոյն բժիշկին անզօրը կը զօրացնէ :

(*) Վերոյիշեալ գեղերը Դեղաբանի մը մէջ պատրաստել առաջ է :

Տօքթօր Պէքըր խիստ յաճախ գիշերային սերմնահոսութիւն ունեցողներն կը խրատէ ծընընդական գործարանները Քամունու աւագանու (acetum camphoratum) լուալ : Սնկողին երթաղէ առաջ սոյն հեղուկէն ապուրի գրգալ մը առնելով աղնիւ սպունքով մը լուալու գործողութիւնը կատարելու է :

Հեշտական գրգիռը երբ չափազանց լինի և գիշերային սերմնահոսութիւնք խիստ յաճախ պատահին յայնժամ օրը երեք անգամ կէս ցուրեն Քամունու փոշի ուտելու է :

Հետեւեալ գեղը զօրութիւննին կորսնցնող անձանց համար խիստ օգտակար կրնայ ըլլալ :

ԱՌ Եղջբար-է Եղջբ-ը (cornu cervi) 64 տրմ. (16 loth) և Սէլէի արմար (radix salep) լաւ ծեծած 8 տրմ. (2 loth) . ասոնք 168 տրմ. (2 maas) Ջրոյ մէջ եփէ գոցուած հողէ անօթի կամ լաւ Էւլալ ամանի մը մէջ մինչեւ որ չորրորդ մասը մնայ, յետոյ լաւ մը լաթէ անցուր և մէջը և տրմ. Կարնիզ ծաղկաց ջուր (aqua florum aurantii) և 8 կաթիլ կինարանէ է-ղ (oleum cinnamomi) կամ եթէ ասի շատ թանկ է 16 տրմ. կինարանէ ուրբ (syrupus cinnamonomi) վրան աւելցուր, յետոյ մէջը 16 տրմ. սպիտակ շաքար խառնելով լաւ գոցուած շիշի մը մէջ լից և պազ տեղ մը պահէ . սոյն գեղէն առաւօտ և երեկոյ 6-8 գրգալ առնելով մէջը հաւկիթի մը գեղինը և տաք մսի ջուր խառնելով խմելու է :

Բժիշկք կը հաստատեն թէ որովայնի որդերը (ascaride) գիճութեան գրգիռ կը պատճառեն :

Այսպիսիք պէտք է, ըստ Տօքլօր Ռաստրէլի, Լէտօբուն փոշիի (Lycopodium) կամ + հայ հետ քիչ մը բամփուրի նուրբ փոշի խառնելով և վրան ջուր լեցնելով ծննդական անդամներն առաւօտ ու երեկոյ լուան : Նաև անկողնոյ սաւաններուն վրայ պղպեղի կամ բամփուրի նուրբ փոշի ցանեալ է :

Յաճախ կը պատահի նաեւ որ Մայուսէ պատճառաւ ազգը աղիքներուն մէջ հաւաքեալ և փակեալ կը մնայ ու գիճութեան գրգիռ կուտայ : Եթէ թէյի մը գրգալ Քըրը-Էւրը (cremor tartari) քիչ մը ջուրի մէջ լուծելով ամեն օր խմուի 4-6 շաբաթէն սոյն գրգիռը կանհետանայ : Այս պարագայիս մէջ նաեւ լաւ հետեւանք կունենայ եթէ ժամանակ ժամանակ լոկ ջրով գրէլ առնուի :

Վերոյիշեալ գեղերն գործածուած ատեն պէտք չէ նաև անհոգ ըլլալ ինքզինքը հմուտ և կորեկից բժիշկի (*) մը ցցնելով անոր հետ իւր վիճակին վրայ խորհրդակցիւն և նորա տնօրինածը ճշդիւ գործագրել :

(*) Պարտք կը համարիմ հոս Հայ Երիտասարդութեան Հայագի ճարտար, փորձառու և մարդասէր բժիշկ մը ներկայացնել, որ ամեն տեսակ հիւանդութեանց նայել զատ մանաւանդ աշաց տկարութիւններն դարմանելոյ մէջ ցոյց տուած յաջողութիւններով շատերն կը գերազանցէ : Մեծ ՏՕՔԹՈՐ Կ. Վ.Ա.Բ. ԴԱ.ՆԵ.Ը.Ն.Ն է այս բժիշկը և կը բնակի Քումբ-գափու Պատրիարքարանի փողոցի Դեղարանին կից տունը :

Վիրթէմպէրկի Հայլառոն քաղքին մէջ Զիւլըրըրի գեղարանը հարիւր տարիէ ի վեր գիճութեան հետեւանացը գէմ երեք տեսակ գեղ կը պատրաստուի որ կայսերական արտօնագիր ունենալէ զատ բժիշկներէ ալ վկայեալ է :

Սոյն գեղերն ունենալ ուզողը կը նայ իր վիճակը բժիշկի մը գրութեամբ ատորագրել տալ և սոյն ստորագրութիւնը յիշեալ գեղարանը կամ մեզի (*) խրկելով զանոնք աժան գնով բերել տալ : Ահաւասիկ նայն գեղերուն անոնը և գեղարանին հացեն, Sicherersche Apotheke Heilbron : Tinct . confortativa և ֆիորին 30 քըրայցը . Pil . restaurante և ֆիօրին 30 քըրայցը . Pulu . prolifi . eus . և ֆիօրին 30 քըրայցը . Գործածութեան յայտագիրը գեղերուն հետ է :

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՊԱ.ՐՏԱ.ԽՈՐՈՒԹԻՒՆ Ա.ՑԼՈՅ ՕԳՆԵԼՈՅ

Եթէ դու գահավէժ լեւան մը եղերքն քնաշած լինէիր, և բարեկամացդ մին գալակ գքեզ արթնցնէր ու վար իյնալէ աղատէր, ալ յայնը մէկետէ այնպիսի վտանգաւոր տեղեր քնաշող և անդնդոց մէջ իյնալով չարաշար կորսուելոյ վրայ եղաղներն արթնցնէր և աղատելէ ետ պիտի

(*) Ֆրենկեան Գրատուն Ուզուն-Զարչի թիւ 562

տի կենայիր , անտարակոյս ոչ . այլ նուիրական պարտք մը պիտի համարէիր անօնց ազատմանը համար ձեռքէդ եկածը ընելց . այսպէս նաեւ պարտաւոր ետ դիճութեան և հեշտութեան շղթայներովը կապուած ընկերակիցներդ խրատել , զգուշացնել և աղատել . Անթիւ երիտասարդներ յօդուտ մարդկութեան , պիտի ապրէին եթէ խոհուն բարեկամ մը , իմաստուն դաստիարակ մը յարմար տաենին զանոնք խրատած և զգուշացնեցած րլլար , ասկայն նոքա իրենց թրշնամեղն վրայ տեղեկութիւն , և անոր տուած ֆնաներուն վրայօք գաղարար չունենալով և չատանալով չարաչար կորան . Ուստի ուսուցչաց , մանկավարձից գաստիարակաց և քահանայից նուիրական պարտաւորութիւնն լինելու է զիրենք շրջապատող ծաղկահասակ պատանեաց վրայ հսկել , մանաւանդ դիճութեան և հեշտութեան մասին լաւ ուշադրութիւն ընելու են անոնք , և երբ մէկուն վրայ դիճութեան կասկածներ ըլլան խոյն խրատելու և զգուշացնելու են զայն , և եթէ որդը արդէն սկսած է նորա կենաց ծուծը պատռել . և թպնը անոր երակներուն մէջ տարածուած է . յայնժամ ճիգ և ջանք ըլ ինայելով նորա անգին կեանքը մահուանէ աղատելց համար ամեն միջոց ի գործ դնելու են . Մի և նոյն պարտաւորութեան տակ են մանաւանդ ծնողք , ուստի անսնք ալ պէտք է որ մեծ հոգ և խնամք ունենան իրենց մատաղ տղայոց վրայ , որ մի գուցէ չար ընկերներէ թելադրուելով դիժութեան հետեւին . Սակայն ասի դիւրին բան

չէ , զի ծնողք այս մասին յաճախակի անզգոյց ընթացք մը կը բռնեն և անխոհեմ աղդարարութիւններ ու յանդիմանութիւններ ընելով յաւետ ֆնաս կը հասցնեն իրենց զաւակաց և մինչեւ իսկ անօնց խստապրտութեանը պատճառ կըլլան . ուստի սէր , իմաստութիւն և աղդեցութիւն մէկ խօսքով խոհեմութիւնն իւր ամբողջ նշանակութեամբը կարեւոր է այնպիսի դժուար և վտանգաւոր պարագայից մէջ յաջողելց համար . Հետեւեալ կերպը ուսուցչաց ուշադրութեան նը կը յանձնեմք :

Կրօնագիտութեան կամ քրիստոնէական դասի ատեն (սակայն մանչերը և աղջիկներն միասին լինելու չեն) երբ «մի շնար» պատուիրանքին կուգայ խնդիրը , զանի տղայոց բացատրելեն զինի ըսելու է . «մանաւոր տեսակ բղջախոհութիւն մ'ալ ծննդական գործարանաց հետ խաղալն է . ասի խիստ փոքր մանկունք ալ կը նեն , որոնց ձեռքերուն զարնելու ենք այնպիսի բան մ'ըրած ատեննին , ինչու որ Աստուած հըրամայած է որ ծածկենք զանոնք : Ինչպէս Ադամի ու Եւա գիտութեան ծառին դպչելու չէին այնպէս ալ մենք մարմնոյ այս անդամին դպչելու չենք բացի միզելու տաենէն : Այն մարդկիը որ այս կանոնիս հակառակ գործելով դիճութիւն կընեն հոգով և մարմնով կը խանդարին » :

Յետոյ դիճութեան գերի եղողներուն մի քանի պատմութիւններն յառաջ բերելու է , կամ այս մոլութեան ահարկու հետեւանքներն կարճ խօսքով յայտնելու է , նախորդ գլուխներուն մէջ

յիշուած որդնոտած ու փատած խնձորին, խորշակնահար ծառին կամ ատոնց նման օրինակներ յիշելով և Սուրբ Գիրքէն այս նիւթիս վերաբերեալ քանի մը խօսք կարդալով, աս բոլորը վեհ ձայնով մը և պատկառելի կերպարանքով ընելու է, և պիտի տեսնես որ աշակերտացդ խումբին վրայ խորին ազգեցութիւն պիտի ընեն խօսքերդ Նաեւ խիստ օգտակար կրլայ մանկահասակ պատանեաց, Եթէ գաստիարակներն, մանաւանդ հագեւոր հարք, գիճութեան գառն հետեւանքներն ծանօթացնեն անոնց հետերնին առանձին խօսելով, և զգուշացնեն զանննք այն մոլորութեան մէջ իշխալէ, և եթէ իմանան որ արդէն գիճութեան թոյնը նոցա կեանքը խանդարել սկսած է, փութալու են ամեն ջանք ի գործ գնել զանոնք այն մոլութեան ճիրաններէն ազատելոյ: Սոյն փորձը գործադրող Եւրոպացի քահանայք և գաստիարակք կը պատմեն թէ շատ պատանիք արտառուօք խոսառվանած են Էրեց Հօններու առբէն Արևել այն հենառել Տունուն ճիշտուած անենաւ առաջար վնենքն, ստուգիւ ցաւալի և սարսափելի է այս, նաեւ ապացոյ մը թէ գիճութիւնը որքան կանուխ կսկսի իւր աւերումներն ի գործ գնել գեռահաս մանկանց մէջ: Աւաղ մեզ, զի հայ պատանեաց մեծագոյն մասը, որմէ գուրս չեն նաեւ գեռահաս օրիորդք այս սարսափելի թոյնովը թունաւորեալ են: Ուստի ընդհանուր առմամբ ամեն պատանի տասն և չորս տարեկան եղածին պէս գիճութեան և նորա հետեւանաց վրայ լիովին անորոշ պատահաւութիւնը:

Եթէ մանկահասակ տղու մը, ասկից աւելի կանուխ գիճութեան սկսած լինելուն կասկած կայ պէտք է այս նիւթիս վրայ աւելի կանուխ տեղեկութիւն տալ անոր: Այս գիճութեան կամ մինչեւ անդամ անոնց ալ որ մաքուր և բոլորովին զերծ են այս տեսակ կենաւեր մոլութիւններէ. քանզի փորձով ապացուցուած է, որ մինչեւ անդամ 10-12 տարեկան տղայք և աղջկունք ալ որ թէեւ այլցմէ բոլորովին մաքուր համարուած, այլ սակայն գիճութեան ձեռքն գերի ինկած էին: Մանաւանդ որ մաքուրներն պղծութեան որս լինելու վտանգին մէջ են ամեն օր, ուստի աւելի լաւ է որ այսպիսի կերպով շարագրեալ գրքէ մը գիճութեան վրայ տեղեկութիւն ստանան, քան թէ մոլուցուցիչ անձի մը բերնէն, քանզի այս գըլքոյկը այնպիսի հեղինակաց գըլութեանցը համաձայնած է, որոնք, ըստ պարկեշտ, բարի և հըմատութաստիարակաց վկայութեան, ամեն գեռահաս պատանի ալ կրնայ կարդալ, որուն ընթերցումը վնասակար չը լինելէ զատ յաւէտ կրնայ ըլլալ անոնց: Այս է ահա ամեն օգտակար կրնայ ըլլալ անոնց: Այս է ահա ամեն զգայուն սիրտ ունեցողաց պարտաւորութիւնը առ թշուառ երիտասարդութիւնն, և եթէ ասանկ մեծ ու վսեմ պարտաւորութիւն մը կասանկ մեծ անհոգ և անփոյթ լինինք, յայնժամ տարելու անհոգ և անփոյթ լինինք, յայնժամ գիճութեան զահ եղողներէն շատերը իրենց գերեզմաններէն անէծք պիտի կարդան մեզ:

ԳԼՈՒԽ ԺԵ:

ԳԻՃՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Դաստիարակք և ծնողք հետեւեալ նշանները նկատելով դիւրաւ կրնան իմանալ թէ արդեօք իրենց հոգատարութեան յանձնեալ տղայոց ո՞րը գիճութեան ախտէն բռնուած է . ասի կարեւոց կէտ մ'է , քանզի ստէպ կը պատահի որ տղայք ամաչելով կուրանան տոյն մոլութեան ծառայել նին , և եթէ անոնց խօսքին հաւատք ընծայեմք , նոցա հոգւով և մարմնով խանդարուելուն և ի կորուստ մատնուելնուն պատճառ կը լինիմք : Ասոնք են այն նշանները :

Արտաքին և մարմնական նշաններ : - Տժգոյն և գունաթափ դէմք . թուլս և կապոյտ զրջանակներով աչքեր , (ասիկայ որովայնի որդերէն ալ կրնայ պատճառիլ) յաճախական և յանկարծական փոփոխութիւն երեսի գոյնի . դիմաց մաններու թուլութիւն , քթին , ճակատին : և երեմներուն չուրջը շարաւալից մանր փշտիկներու դուրս ցցուիլն . բերնի զղուելի դարշահոտութիւն , անհանդարտ ու երկշոտ նայուածք . ապակիի նման աչքեր , դասի ատեն պաղ հայեցուածքով մը ուսուցիչին երեսն նայիլ առանց գիտնալոյ թէ նա ինչ կը խօսի , ձեռաց և ոտաց մատերուն մէջ անհանդ ստութիւն . ձեռքերն միշտ ծննդական անդամոց մօտերը տանելու հակամութիւն . ծունկերու անզօրութիւն և անհաստատութիւն , որով քալուածքն ալ երերեալ ու տատանեալ կըլլայ .

Ջիզերու մասնաւոր գրգռում և տկարութիւն . ամենափոքր աշխատութենէ մը ետեւ ուժաթափ լինել . երկիւղ և վախ յանկարծական սչինչ պատահումէ մը . ախորժակի փոփոխութիւն , որովնամերթ անյագաբար ուտէ և մերթ բնաւ կերակուր ուտել չուզէր . մարսողական զօրութեան նըւազում և այլ և այլ տկարութիւններ : Ասոնք ամենը բացայաց նշաններ և ապացոյցներ են որ գիճութիւն ընողին վրայ կերեւի . նաեւ գիճութիւն ընող տղայք երբեմն անկողնոյ մէջ կը միզեն , և երկար ատեն արտաքնոցը կը կենան :

Մտաւորական նշաններ : - Գիճութիւն ընող տղայոց երեւակայութիւնը խիստ զբաղեալ մնի , շատ անդամ ալ խորհուրդներնին բոլորովին ցրուեալ են թէեւ արտաքուստ խորին մուածութեանց մէջ կերեւին . բնութիւննին խիստ դիւրագրգիտ լինի . բարկութիւն , զուարթութիւն և տիրութիւն մէկ վայրկեանի մէջ իրարու կը յաջորդեն . նախանձ , շարակամութիւն և վնասասիրութիւն . անուշագրութիւն դասերու , մանաւանդ կրօնական դասի ատեն , մոտիյն թմրութիւն , յիշուզութեան և այլ մոտային կարսղութեանց խանդակութիւն , իգական սեռի վերաբերեալ բաներու չափացնց ուշագրութիւն . երբեմն , և խիստ յափաղանց ուշագրութիւն . երբեմն , և է մէկուն հետճախ ալ , իգական սեռին որ և է մէկուն հետ յարաբերութիւն ունենալու դժկամակութիւն , ինչպէս նաև խաղալու և այլ շարժմանց , առանձնութեան հակամութիւն . մտերիմ և բուռն յարաբերութիւն իր սեռին եղող տղայոց հետ . վերջապէս ձանձրութիւն և զզուանք կեանք :

Երբ այս նշաններէն շատերն ի միասին տղու
մը վրայ տեսնուին , զանի առանձին տեղ մը կան-
չելով բարեկամաբար մարդասիրութեամբ և գը-
թալից կերպով հետք խօսելու է . երբ նա իւր
միլութիւնը խոստովանի պէտք է զղուանոք , հան-
գարտ , ծանր և լուրջ կերպով խօսիլ անոր հետ ,
ցցընելով անոր մի առ մի գիճութեան բաղմա-
դիմի վնասներն և նորա յառաջ բերած սոսկա-
լի հետեւանքներն , և յետոյ այս գրքիս մէջնը-
շանակեալ դարմանաց որն որ կը յարմարի անոր ,
գործադրուելու է , սակայն պէտք է միշտ յիշել
որ այսպիսի ծանր պարագայից մէջի որտէ գութ
և խանդաղատանք ցոյց տրուելու է մոլորելոյն ,
և նորա կենաց վրայ շարունակ հսկելու է . եթէ
մոլորեալ տղան բարւոքիլ սկսելէ յետոյ նորէն իւր
ունակութեանը դառնայ , յայնժամ գաւաղանը
ըստ պատեհութեան օգտակար և փրկարար մի-
ջոց մը կընայ համարուիլ և գործածուիլ : Գլխա-
ւոր կետը այն է որ մոլորեան թէ մեծ ըլլայ թէ
փոքր յարմար ատենէն սոյն ունակութեան զրդ-
ուելի և վնասաբեր լինելուն լաւ համոզուի , և
ներքին հիմնական համոզմամբ , բժշկուելու ճշ-
մարիտ բաղձանք ունենայ , յայնժամ դիւրին կըլ-
լայ զանի ըստ պիտոյից դարմանել :

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Եթէ ծնողք և դաստիարակք տղայոյ ծա-
ղիկ հասակին մէջ քանի մը կէտերու մասնաւոր
ուշադրութեամբ զգուշութիւն ընեն , այն մա-
տաղերամ գառնուեկներն այնքան դիւրաւ գի-
ճութեան որս չեն լինիր :

Փոքրիկ տղայքներն ու աղջիկները իրենց ծա-
ղիկ հասակին մէջ յաճախ պարզ խօսքերով իրա-
տելու է ծննդական անդամոց հետ չը զրօնել ,
և արգիլելու է զանոնք անոնց հետ խաղալէ .
Նոքա այս բանին վարժուելու ու կրթուելու են ,
ինչպէս որ կը կրթուին իրենցը չեղած բանին
ձեռք չը զարնելոց , գէշ խօսքեր չը գործածելոց ,
սուտ չը խօսելոց . եւն եւն :

Ի ծննդենէ տղայք փափկութեամբ ինսամուե-
լու չեն . հոգատար ըլլալու է անոնց մարմինը
պաղ չըրոյ լուացմունքներով , բայց և մաքուր օ-
գի մէջ ժուռ գալով , այլ և այլ շարժումներով
և յարմար կենցաղավարութեամբ գժուարու-
թեանց վարժեցնել և դիմացկուն ընել զանոնք :

Տղայք մինչ իրենց տասներիկու կամ տասնե-
չորրորդ տարին վարժուելու են կարծր անկողին-
ներու վրայ պառկիլ , զի փետուրէ անկողիններն ,
փափուկ բարձերն ու վերմակները զանոնք փափ-
կակեաց կընեն . ամենալաւ վերմակը բրդեղենն
է : Նաև անոնց հանդերձներն չափաղանց չեր-
մացուցիչ լինելու չեն , ոչ խիստնեղով ալ ունայկա-

սիրութիւննին գրգռելու չափ զարդարուն : Մաս-
նաւորապէս վնասակար են ծննդական անդամն
ներն սեղմող նեղ վարժիկներն և բանթալոննե-
րը ըստ այժմեան մօտայի :

Բանթալոնի ժապաւենները (ասկը) խիստ
թոյլ պէտք չե ըլլալ : Մասնաւորապէս զդոյշ ի՞-
նելու է որ աղջկունք անթեւ շրջազդեատներ չը
հագնին . անոնց երբէք թոյլտութիւն ընելու չէ
թեւերնին , վիզերնին և կուրծքերնին անձած-
կոյթ թողլոյ , դի ասոնք ամենքն անոնց դիւրաւ
գրգիռ կուտան սիրային յարաբերութեանց սկը-
սելոյ , և վտանգաւոր ու աւերիչ միջոցներ կըլ-
լան : Սկիզբն յաղթողն յետոյ դժուարութիւն չը
քաշեր . արդ եթէ աղայք իրենց մանկութենէն
լաւ կերպով դաստիարակուն վերջը շատ երջա-
նիկ կեանք կանցունեն , զերծ և ապահով լինե-
լով ամեն մոլութիւններէ :

Տղայոց մնունդը պարզ ըլլայ . փոքր ինչ միա
և գինի , ալիւրէ շինուած թեթեւ կերակուր ,
կաթ ու մրգեղէնք , ասոնք շատ լաւ են . խակ
գրգռիչ , ջերմացուցիչ , համեմեալ և խիստ ոլ-
ունդարար կերակուրներն ու խմելիքներն վնա-
սակար են : Առատ պաղլ ջուր խմելու են տղայք .
նաեւ որոշ և կանոնաւոր լինելու է անոնց կե-
րակրոց ժամանակը :

Տղայոց շարժմանցը և խաղերուն ալ հոգ ու
խնամք տանելու է , շատ անդամ երեք չորս
տարեկան տղայք ծննդական անդամոց հետ խա-
ղալ կակսին . շատ անդամ միմեանց առջեւ կը
մերկանան . տարբերութիւննին կը դիտեն , և

զանոնք իրենց խօսակցութեան նիւթ կընեն .
այսպէս կանուխ չար ճամբայներու մէջ կը
մտնեն . մասնաւորապէս մանկունք վրա տղայոց
շրջանէն հեռու պահելու է . աչքերդ անոնց
վրայ միշտ բաց ըլլան , ծածկաբար զննէ զա-
նոնք . ականջ դիր անոնց խօսակցութեան և
դիտէ թէ տակաւին անոնք անմեղ են թէ ոչ :
Զանոնք ծննդական անդամներն գրգռող խա-
զերէն հեռու պահէ , ինչպէս գաւազանէ , ձիու
վրայ հեծնալէ , օրորւող ձիերէ , սանդուխին վր-
րայէն վար սահելէ , նատած ատեն որունքներն
իրարու վրայ դնելէ ; այս վերջինը մանաւանդ-
շատ չար դրգիռներու պատճառ կըլլայ : Թողե-
լու չէ որ տղայք ձեռքերնին գրգաննին դնեն .
անկողնոյ մէջ ալ պէտք է որ ձեռքերնին վեր-
մակին տակ ըստահեն , այլ խաշաձեւ կուրծքին
վրայ դնելու են :

Մանաւանդ լաւ ուշադրութիւն և զգուշու-
թիւն ընկելու են ծնողք իրենց սպասուհիներուն
որոնց ձեռքը կը մեծնան ընդհանրապէս մանկա-
հասակ տղայք . փորձելով ոտուգուած է որ շատ
սպասուհիներ և մինչեւ անդամ կաթնտուներ
ալ իրենց խնամոցը յանձնեալ խեղճ անմեղ տղ-
զայքներն ծաղիկ հասակնուն մէջ դիմութեան
վարժեցուցած են . անոնցմէ ոմանք լացող և ճը-
չող տղայքներն հանդարտեցնելոյ համար նոյցա
ծննդական անդամները կը շոյեն ու կը շփեն և
թէպէտ նպատակնուն կը հասնին , սակայն գիճու-
թեան հիմն ալ խեղճ մանկան վրայ կը հաստա-
տեն : Ուրիշներ ալ բուն իրենց հեշտութիւնը

յագեցնելոյ համար այս զաղիր մոլութիւնը ան-
մեղ մանկանց վրայ ի գործ կը դնեն և զանոնք
գիճութեան և իր ահռելի հետեանաց ենթակայ
կընեն :

Ով ձնողք, գիտէք արդեօք ձեր տղայոց
վրայ ինչ սարսափելի փորձեր կըլլան ամենա-
վատ մոլութեանց, քանի որ դուք զանոնք վայ-
րենի անձանց ձեռն յանձնելով ուրիշ տեղեր
զուարճանալու կերթաք. ուստի լաւ հոգատա-
րութիւն ըրէք ձեր մանկանց վրայ և գիտէք
թէ ինչ տեսակ մարդոց և կանանց խնամատա-
րութեանը կըյանձնէք զանոնք :

Տղաքներն իրենց մանկութեան հասակէն ա-
մօթխածութեան վարժեցնելու է. աս բանիս հա-
մար մեծ խնամք և հոգատարութիւն կարեւոր
է. մի թողուր որ նոքա միմեանց առջեւ մերկա-
նան, ի սիասին լուացուին, և իրարու հետ պառ-
կին. նաեւ պէտք է տղայոց վրայ հսկել անկողին
դաշած առեն մինչեւ որ քնանան. օրուան մէջ
ալ զանոնք առանց զբաղման ձգելու չէ :

Զափահասք զգոյշ ըլլալու են և իներկայու-
թեան տղայոց զիրար գուուելոյ և խօսքով կամ
հայեցուածքով միմեանց սիրոյ նշաններ ցոյց տա-
լոյ չեն, զի տղայք այս տեսակ շարժմանց մասնա-
ւոր ուշադրութիւն կընծայեն :

Որքան ձնողքներ իրենց տղայքը քնացած
համարելով գայթակղութեան պատճառ տուած
են անոնց. այո՞, թէպէտ շատ անդամ քնացած
կը ձեւանան տղայք, սակայն ամեն բանի լաւ ա-
կանջ կը դնեն և խորին մոտադրութիւն կընեն :

Ուսուցիչք ալ մասնաւորապէս ուշադիր լի-
նելու են իրենց աշակերտաց գասախօսութեան
ատեն, մանաւանդ գեղագրութեան և գծագրու-
թեան նման ուսանողաց խորհուրդներն նուազ
գրաւող գասերու ատեն, յորիժամ սովորաբար
տղայոց աջ ձեռքը գրասեղանին վրայ է, իսկ
ձախը անոր տակը, և մարդ չգիտեր թէ հոն
ինչ կը գործեն անոնք, վարժապետը նայելու է
որ ուսանողաց երկու ձեռքերն ալ գրասեղանին
վրայ ըլլան : Աղջիկներն ալ կար կարած ատեննին
վատ խաղով մը կըզբօսնուն . անոնք սրունքներ-
նին միմեանց վրայ դնելով կարելու լաթերնին
անոնց մէջ տեղը կը բռնեն, և թէպէտ վայելուչ
գիրքի մէջ կերեւին, սակայն անկէ յառաջ ե-
կած ճնշմամբը իրենց վատ հեշտութիւնը կը
յագեցնեն . ասի անսնց գիճութեան սկսելուն
պատճառ կընայ լինիլ, ուստի խստիւ պէտք է
արգիլել զանոնք այսպիսի գիրքով նստելէ :

Տղայք շատ հետաքրքիր են ամսւանական
յարաբերութեանց վրայ գաղարար ստանալոյ ,
կուզեն իմանալ անոնքթէ իրենց նորածին եղբայրն
կամ քոյրը ինչպէս եղաւ, և ձնողք ալ սովորա-
բար զանոնք գոհ ընել կը կարծեն ըսելով թէ
«հորէն հանեցին, դայեակը բերաւ, երկինքէն ե-
կաւ» եւն . սակայն ասի չկընար երկար ատեն ա-
նոնց հետաքրքրութիւնը յագեցնել, մանաւանդ
որ երբ խաբուած ըլլանին հասկնան, յայնժամ
ասի գէշ ազգեցութիւն կընէ անոնց վրայ , և
երբ անոնցմէ մին բռն եղելութեան տեղեկանայ
խսկոյն այլոց ալ կը հազորգէ և այսպէս երեւա-

կայութիւններն կը գրգռին : Առանց վախցուելոյ տղայոց կրնայ ըսուիլթէ փոքրիկ երախայն մորը որովայնին մէջ կը դոյանայ ինչպէս որ կատուին ձագը մեծ կատուին , և հորդը կովին , գառը ոչխարին , և հաւկիմը հաւին փորին մէջ կը դոյանայ . ասիկայ կատարելապէս գոհ կընէ տղայք մինչեւ անոնց տասներկուերորդ տարին : Ծննդական ամբողջ իրողութիւնը տասնեւվեց տարեկան ըլլալէ յառաջ անոնց բացատրուելու չէ :

Դաստիարակք , ծնողք և մանաւանդ կոռավարութիւնը ուշադիր և հոգատար լինելու են անասնոց զուգաւորութիւնը անմեղ տղայոց տեսութենէն գաղտնի պահել . ստուգիւ մեր արեւելեան քաղաքաց , մանաւա՞գ կոստանդնուպօլսոց մէջ տղայոց գիճութեան և մոլութեան գրգիւ և պատճառ տուղղներն մասսամբ մ'ալ շուներն են , որոնց զաղրալի և պիղծ զուգաւորութիւնը փողոցներու մէջ մանկանց աշաց առջև ամեն օր կը կատարուի , և խեղճ անմեղ մանկունք ալ մեծ հետաքրքրութեամբ կը դիտեն ու բարոյապէս կը թունաւորուին այս զաղիր տեսարաննէն :

Եթէ կառավարութիւնը անհոգ և անփոյթ կը մնայ ի նշան քաղաքակրթութեան այս զաղրալի կենդանիներն Պօլսոյ փողոցներէն վերցնելոյ , (որոնք նաեւ կատաղելով և անցորդներն խածնելով ամեն տարի բաւական անձանց ալ մահուանը և չարաչար կորստեամբ պատճառ կըլլան) , գոնէ ի սէր բարոյականութեան , անմեղ մանկանց մուրելուն և չար ճանապարհաց առաջնորդուելուն մեծաւ մասսամբ պատճառ կըլլան :

Նիներն վերցնել բարեհաճի . որով մեծ բարիք մը ըրած կըլլայ ժողովրդեան երկրին մէջէն անբարոյականութեան ամենապիղծ աղբիւրներէն մին ցամքեցուցած լինելով :

Վերջապէս ամենայնիւ զգոյշ լինելու է զի մի գուցէ տղայոց ջղային գործունէութիւնը ժամանակին յառաջ զարթնու , մանաւանդ ուսման մէջ զգուշութիւն խիստ կարեւոր է , որպէս զի անոնց երեւակայութիւնը շուտ չը գրգռի , և միտքը տղայական հասակին անյարմար խորհուրդներով չը լցուի :

Տղայք խիստ կանուխ (ըսել կուղեմք շատ պղտիկ , 5-6 տարեկան) գովրոց զրկելը , անոնց մատաղ հասակին մէջ գիտութիւն և ուսմունք աւանդելու արտորալը , նոցա յիմարական վէպեր պատմելը և ահարկու ոգիներու պատմութիւններ ընելը , անխորհուրդ կրթութիւն մը տալլ եւն-առոնք ամենը դեռահաս տղաքներն իրենց անմեղութեան երազէն կարթնցնէ և գիճութեան կը նախապատրաստէ :

Մասնաւոր զգուշութեան կարօտ է տղայոց գասերը . շարունակ մոտիին աշխատութիւնը առանց հանգստեան միջոցներու և առանց ուսանելէն վերջն զբօսնելոյ վնասակար է . նաեւ վարժապետաց ոմանց խստութիւնը և այլոց աններելի անփութութիւնը , մանաւանդ կրօնական և բարոյական գասերու նկատմամբ , մէկ խօսքով տղայոց հանուր գաստիարակութեան նկատմամբ եղած անհոգութիւնը կրնայ պատճառ ըլլալ որ գիճութիւնը առանց դժուարութեան և աղատաբար

մանկանց մէջ ծնունդ առնու , աճի և կործանէ զանոնք :

Երբ այս ամենը նկատենք , ստուգիւ պիտի խոստովանինք որ ծնողաց , դաստիարակաց և քահանայից պաշտօնը խիստ դժուար է , և պիտի համոզուինք որ մեծ պարտականութեանց և ծանր պատասխանատութեանց տակ են անոնք իրենց խնամոց յանձնեալ այն մատաղերամ մանեանց բարեկեցութեանը նկատմամբ . վայ քեզ եթէ քու անհոգութեամբդ և պարտազանց գտնուելովդ այն անմեղ գառնուկներէն մին գիտութեան կատաղի ճիրանացը մէջ իյնայ . աւաղ քեզ եթէ քու պատճառովդ անտնցմէ մէկը մոլորի , անիծեալ ես գույայնժամ , (տես Աւետարան ըստ Ղուկասու Գլ . Ժէ . հմր 2 .) երբ խրախոյս ու քաջալեր կարդասա այլոց որ քեզ նման այն թոյնէն խմեն և անձնասպան ըլլան :

Իսկ գու , խեղճ , ողորմելի և դժբաղդ մոլորեալ , յիրաւի ցաւալի է վիճակդ կողբամ ու կարասուեմ քու թշուառութեանդ վրայ , և թէոր սոյն աշխատասիրութեամբս կարենամ քու կամ քեզ նման ուրիշ մը գերութեան շղթայներէն խղերով յաւիտենական աղատութեան ասպարէզն հանել , յայնժամ երջանիկ եմ ես և իմ վարձքայն է :

ՅԱՀԵԼՈՒԱԾ

ՊԵՌԼԻՆԻՆ ՆԱՄՈԿ ՄԸ

Այսօր քաղաքիս չիւանդանոցը պարտած ատենս բաղում աղետալի տեսարաններ ներկայացն աշացս առջեւ . սակայն նոցա մոտացս վրայ ըրած խորին տպաւորութիւնը բոլորովին ջնջուեցաւ երբ չիւանդանոցը թողելէս առաջ շէնքին մէկ սենեակը աշքէ անցուցի : Տակաւին անդամներս կը գողան երբ հոն տեսած աղետալի և աննրկարագրելի տեսարանը երեւակայութեանս հորիզոնէն վեր կրարձրանայ . այն սարսափելի պատկերը վրաս սարսուա մը կը բերէ . զզուանք մը , գարշում մը իմ բոլոր միրտս կը լեցնէ . երկու սպասու հիներ սանդուխէն վեր կին մը կը հանէին : Ասի , ըստ զիս չիւանդանոցին մէջ առաջնորդողը , ասի սքանչելի շքեղութեան տէր կին մ'էր . պատուաւոր անձի մը ամուսինը , որոյ սէրը լիովին կը վայելէր նա : Անառակ մարդիկ զանի երերիկէն մոլորցուցին . նա յայնմ յետէ անտառակ կեանք մը վարելը իրեն սովորական զբաղսւմն ըրաւ որով այս գառն վիճակիս մէջ ինկաւ : Նա այժմս ամենայն գեղեցկութիւնը կորսնցուցած էր և լոկ կմախքի մ'էր փոխուած . շարաւալից վերքեր և ուռեցքներ նորա մարմինը ծածկած էին . նորա սրունքները ապականեալ և փատած մարմինը չէին կրնար տանիլ : իր գլուխը և երե-

ըլ լաթով մը ծածկուած էր . երբ ի առջեւէս կանցնէին զայն լաթը գլխէն վերցուցին : Ո՞հ , Աստուած իմ , ինչ ահռելի տեսարան աշացս առջին ներկայացաւ - ակռայներս արասափէս սկսան միմեանց զարնուիլ - մարդու գլնչս մը , առանց աշաց , առանց շրթանց , առանց այտերու , առանց քիթի - առոնք ամենն ալ հեշտութեան թոյնը ապառեցուցած , մաշեցուցած և փոտեցուցած էր : Ճակատէն մինչեւ թուշը շարաւով և գարշահոտ նիւթերով լեցեալ խոռոշի մ'էր փոխուած : — Աւաղ , բիւր աւաղ անոր , որ հեշտական գրդռանաց ձեռքը գերի լինի . վայ անոր որ հեշտութեան հետ կըդրօսնու և կը զըւարճանայ : Այո , երբ նա անգամ մը զքեղ , խեղճ երիտասարդ , իր ճանկերուն մէջ առնէ , ալ քու զրօսանացդ ատենը կանցնի . այժմ զըւարճանալու կարդը անորն է , նա հետդ կը խաղայ ինչպէս որ կատուն մուկին հետ կզրօսնու մինչեւ որ զանի սպաննէ : Այո , նա զքեղի իրեն խաղալիք կընէ մինչեւ որ այն աղնիւ և շքեղակազմ մարմնոյդ աղնուադոյն մասունքը մի առ մի աւրէ և խանգարէ և զքեղ ծաղիկ հասակիդ մէջ սպաննէ : Ընթերցող , աննկարագրելի է այն ցաւն երբ մարդս իր կամքովը , իր ձեռքերովը իր անգին կեանքը կը խանգարէ և կապականէ : Սոյն կնոջ ողբալի մնացորդքը տասն եւչորս տարիէ ի վեր այսպէս մնացած են . նորա Շորդը չմեռնիր և կրակը չմարիր . նա ոչ մարդ է , ոչ անասուն և ոչ բոյս . նա մարդու մը կառուսուածը , հացորդն է որ սնունդը այն խոռոշ

դարձած գլխէն ստամքսը լեցունելով գեռ կապրի : Սակայն ո՞հ , ինչ կըսեմ . կեանք է այս . մահն բիւր անգամ ասկէց պատուական չը :

Տա՛ր երկինք որ այս նամակը ընթերցող երիտասարդներն ինչպէս գիճութենէն նյոնպէս հեշտութեան ամեն տեսակներէն այնպէս փախչէին ինչպէս որ պիտի փախչէին եթէ ճամբուն վրայ . Պօս կոչուած ահռելի վիշապը տեսնէին :

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

			ԵՐԵՑ
ԳԼՈՒԽ	Յ. Աղդարարութիւն		5—6
ԳԼՈՒԽ	Բ. Երիտասարդութեան թշնամին	6—9	
ԳԼՈՒԽ	Գ. Գիճութեան վրայ գիտելիք և պացոյցք նորա ոչինչ, մեղսալից և կործանիչ լինելուն :	9—14	
ԳԼՈՒԽ	Դ. Գիճութիւնը մարմնոյ ամենազնիւ հիւթերն և կարողութիւններն կսպառէ և կապականէ	14—18	
ԳԼՈՒԽ	Ե. Գիճութիւնը ջիղերն բնութեան հակառակ կը լարէ ատեն մը և յետոյ կը թուլցնէ զանոնք	19—21	
ԳԼՈՒԽ	Զ. Գիճութենէ յառաջ եկող բաղում հիւանդութիւնք և մարմնոյ աւերտունք	21—24	
ԳԼՈՒԽ	Է. Գիճութեան ծանր հետեւանքները մտային կենաց վրայ	24—30	
ԳԼՈՒԽ	Ը. Գործնական Ապացոյցք մինչեւ ցարդ ըսուածներուն գիճութեան գերի եղողներու նամակներէն քաղեալ	30—34	
ԳԼՈՒԽ	Թ. Գիճութեան ենթակայ եղող միքանի անձանց ահոելի պատմութիւնները	34—41	
ԳԼՈՒԽ	Ժ. Բարոյական դարման վասն հետեւանաց գիճութեան	42—45	
ԳԼՈՒԽ	Ճ. Գիճութեան պատճառ եղող ա-		

ուարկաներ	45—48
ԳԼՈՒԽ ՃԲ. Գիճութեան արգելք եղող առար-	
կաներ	48—51
ԳԼՈՒԽ ԺԳ. Գիճութեան հետեւանաց բժշկա-	
կան դարման	51—55
ԳԼՈՒԽ ԺԴ. Պարտաւորութիւն այլոց օդնելոյ .	55—59
ԳԼՈՒԽ ԺԵ. Գիճութեան նշաններ	60—62
ԳԼՈՒԽ ԺԶ. Զգուշութիւն	63—71
Յաւելուած . Պէրլինէն նամակ մը	71—75
Պարունակութիւն	75—76
Ծանուցմունք	77—80

ՊԱՏԵՐԱՋՄԱՆ

ԸՆԴԻԿԱԿԱՆ ԹՇՆԱՄԵԱՅ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՅ

ԿՈՄ

Ա.Պ.ՈՂ.Զ ԵՐՉԱՆԻԿ ԵՒ ԵՐԿՈՐ ԿԵԱՆՔ
ԱՆՑՆԵԼՈՅ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Բովանդակութիւն . Մարդկային կենաց ար-
ժէքը . կեանքը առողջ և երկարատեւ լնելոյ
համար հին եգիպտացւոց և Յունաց գործածած
միջոցները . 115 տարի և 5 օր ապրող Հոլանտա-
ցի մը . Միջին դարու մէջ տիրող մնապաշտական
գաղաբարք . Ծերացեալն երիտասարդացնելոյ
հետաքրքրական միջոց մը . Պաքօ Անդղիացւոյն
կենաց վրայ ունեցած գաղաբարք . Առողջ նողք.
Ամուսնութիւն . Մանկանց առաջի երկու տարին.
Քնոյ վրայ տեղեկութիւնք . Մարմնամարզու-
թիւն և մորթի մաքրութիւն . Ուտելիք և ըմ-
պելիք . Քօրսէ . Ոգելից ըմպելիք . Ծխախոտ և
քթախոտ . Առողջ , երջանիկ և երկար ապրելոյ
համար ինչ պէտք է լնել . Հաւատքյոյս և սէր .
Քունարօ իտալացին :

Այս գրքոյն որ հայ երիտասարդութեան
համար աշխատասիրեալ է , առողջաբանութեան
հիմնական կանոններն լիտվին իւր մէջ կը բովան-
դակէ : Ուստի կը խրատեմք ամեն իրենց թան-

կագին կենաց արժէքը ճանաչող երիտասարդ-ներն ու պատմիները որ ոչ թէ միայն կարդան զայն, այլ նաև գործադրեն անոր տուած կա-նոնները :

Վաճառի ի Գրատան Ֆրէնկեան , վողոց Ու-
դուն-Զարշը թիւ 362 .

THE JOURNAL OF CLIMATE

ու շատել պիտի քրամ. Համար այս օրուն
կազմ անպատճեղ և իրակ դժմանք . ու ան-
հաւածք պատճեղ և բարձրաբարձ այս պատ-
ճառայիշ բորբոքութեան ու և իրակ ՇԱ. առաջին
և աջական բարբառ է այս ամեն միշտ . ու այ-
ս ամեն բարբառայիշ համարաց և գույնաց ը-
մբ պատճեղ ու այս ամեն միշտ . ու այ-
ս ամեն ամեն միշտ ու այս ամեն միշտ . ու այ-
ս ամեն ամեն միշտ ու այս ամեն միշտ . ու այ-

ԳԱՐԵՎԻՔ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ ԱՐԵՎԱ

ԱՐԱՋՆՈՐԴ ԱՄՈՒԽՆԱԿԱՆ ԿԵՆԱՅ

ՎԱՐՆ ԱՄՈՒԾՆԱՑՈՂԱՅ ԵՒ ԱՄՈՒԾՆԱՑԵԼՈՅ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Բովանդակութիւն . Յառաջաբան . Գլ . 1 . Կո-
չումն և նպատակ ամուսնութեան . Գլ . 2 . Ա-
մուսնական կենաց համար պահանջեալ մարմնա-
կան յատկութիւնք . Գլ . 3 . Պայմանք և կանոնք
ամուսնական յարմարութեան . Գլ . 4 . Յղու-
թիւն . Գլ . 5 . կաթնտուութիւն . Գլ . 6 . կաթըն-
տու կին . Գլ . 7 . Դարմանումն երախայից . Գլ .
8 . Վարժութիւն երախայից . Գլ . 9 . Մանկունք
հիւանդութիւններէ ապահօվցնել . Գլ . 10 . Ման-
կանց նախնական կրթութիւնը . Գլ . 11 . Ման-
կանց ակռայները . Գլ . 12 . Բարեկազմ ման-
կունք . Գլ . 13 . Արտադրումն արու կամ էգ ե-
րախայից . Գլ . 14 . Պահպանութիւն ստամքսի .
Գլ . 15 . Դարման ամըութեան . Գլ . 16 . Դարման
և նկանոն պարբերականի . Գլ . 17 . Դարման ան-
կարողութեան . Գլ . 18 . Ճէյմսի Սթօմագինը . Գլ . 19 .
Գաղտնիք և առաջնորդ . Գլ . 20 Խօսք առ ամու-
րիս :

Գրքոյկիս մէջ կայ նաեւ ամռանական մշտա-
տեւ տարեցոյց մը որ որդեծնութեան օրը կը
ցուցնէ ծնողաց :

Վաճառի ի Գրատան Թրէնկեան Ուղուն
չարշը թիւ 362, և ի Գրատան Գաֆաֆեան եղ-
բարց Զաքմաքըրլար փողոց :

ԱՂՋԿԱՆՑ ԳԻՇԵՐՈԹԻԿ ՎԱՐԺԱՐԱՆ

ՅԱՅՆԱԼՅ-ԳՈՎՈՅ

Ի ԽԱՍԴԻՒԴ Կ. ՊՈԼՍՈՅ

Այս վարժարանիս մէջ 6 Են մինչեւ 15 տարեկան աշակերտուհիներ կընդունուին 20 օսմանեան ոսկի տարեկան թողակով, որոյ կէսը կանխիկ վճարելի է աշակերտուհոյն դպրոցս մտած օրէն :

Աւանդուելիք ուսմունքներն են լեզուագիտութիւն, այլ և այլ գիտութիւնք, երաժշտութիւն, դաշնակ և ամեն տեսակ ձեռագործք :

Վարժարանս երկու Անդղիացի հմուտ վարժուհեաց խնամոցն ու տնօրինութեանը յանձնեալ է, որոնք մասնաւորապէս հոգ պիտի տանին աշակերտուհեաց բարոյական դաստիարակութեանը :

Վասն առաւել տեղեկութեանց՝ պէտք դիմել կամ գրել,

Ա.Պ.

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Ի ԳՐԱԾԱՆ ՖՐԻՆԿԵԱՆ

Փողոց Աւղուն-Զարշը, թիւ 362, Կ. Պոլիս

Ա.ԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա. Ն ԿԼ Օ-Հ Ա Յ Վ Ա Ճ Ա Ռ Ա Ս Ո Ւ Ն

Ա. ԵՒ Տ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆՑ

ԲԵՐԱ. ԳՈՒԼԵՒ - ԳԱԲՈՒ ՀԵՆՏԵԿ ՓՈՂՈՑ

ԹԻՒ 5.

Յիշեալ վաճառատան մէջ կը ծախուին
պատրաստ գեղեր — լաթեղենք . — Թըղ-
թեղենք . — Երկաթեղենք . — Զանազան լեղ-
ուաւ գրեանք , մանաւանդ Անդիերէն
լեզուաւ գասագրքեր , Աշխարհացոյցներ
եւայլն . — Ընտանեկան օգտակար նիւ-
թեր և Տօքթօր Արմենուկ Առատուրեանի
Հայ-Անդղիերէն Քերականութիւնը :



1301

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0072404

